№ 1 (121) XII ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1902

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

1901-1902

Չարագուշակ էր XX դարի առաջին թուականը։

Քաղաքակիրթ կոչուած պետութիւնները կարծէք մրրցում էին իրար հետ ռէակցիայի, գաղուձ, շահամոլ էգոյիզմի և սանձարձակ բռնութեան ասպարէզում։ Թւում էր, թէ պատմութեան անիւը կատարել է ամբողջ դարերի մի հսկայական յետաշրջում։ Ահա ամենաքաղաքակիրթ պետութիւններից մինը, Գերմանիան, ամենագարշելի դահճի պաշտօնում՝ հանդէպ մի ազգի, որը չի ուզում ուրանալ իր ազգայնական ստացուածքները. լեհ մանուկներին արգելւում է աղօթել իրենց մայրենի լեզուով և ըմբոստները մտրակահարւում են ներօնական խստասրտութեամբ։

Ահա քաղաքակրթութեան և լիբերալիզմի գագաթին կանգնած Մեծ Բրիտանեան ամենաքստմնելի բարբարոսութեան ներկայացում է տալիս Հարաւ-Աֆրիկայում իր „կենտրօնացման բանակներով". այնտեղ, մարդկային տանջանքների այն դժոխային կայանների մէջ հեծում է ծերերի, կանանց ու երեխաների մի ամբողջ ժողովուրդ՝ ենթակայ անօրինակ մահացութեան։

Ահա „կենտրօնացման բանակներ" նաև Փիլիպպինեան կղզիներում. ապստամբ Վաշինգտօնի հայրենակիցները, որոնք մի ժամանակ կռւում էին Անգլիայի դէմ՝ յանուն համացեղ ու համալեզու մի ժողովրդի անկախութեան՝ գտնում են այժմ անհանդուրժելի, որ Փիլիպպեցիները՝ եանկիներից միանգամայն տարբեր այդ ժողովուրդը, մարտնչում է յանուն իր սեփական անկախութեան։

Ահա Ֆրանսիան, ամենաաստիճանակը բոլոր պետութիւնների մէջ, ամենագաղուձ քաղաքականութեան նմուշ է տալիս աշխարհին, մի երկու բանկիրների շահերը որոտագին պաշտպանելով և մի ամբողջ խողխողուած ժողովուրդ հիասթափութեան մատնելով. . .

Հեղգութեան ու բարբարոսութեան մի աւերիչ հողմ է փչում ամբողջ լուսաւոր աշխարհի վրայից, և մինչև անգամ փոքրիկ Շվեյցարիան, որ տասնեակ տարիների ընթացքում գրկաբաց ընդունում էր դեսպոտիզմի թափառական զոհերին — Շվեյցարիան, որի ազատ և հիւրընկալ վայրերում ծնել, ծաղկել են Նիհիլիզմը և Կարմիր Ինտերնացիոնալը՝ վատհոգի ապիկարութեան մի ապացոյց տուեց անցեալ տարում՝ արշաւանք սկսելով սուլթանական հալածանքների զոհ՝ Երիտասարդ Թիւրքերի դէմ։

Ռէակցիան համաշխարհային է, և պետական լիբերալիզմի աւերակների վրայ չի փայլում մի աստղ, չի ծնւում մի Գլադստօն, որ ահեղ որոտումով սահման դնէր բռնութեան արհաւիրքներին. . .

Ռէակցիան համաշխարհային է, և ոչ ոք չի քաշւում։ Իւրաքանչիւրը քաջալերւում է ուրիշների օրինակով. . . Աբդիւլ Համիդն անգամ թերևս իրաւունք ունենայ ասել իր գազանութիւնների դէմ՝ բողոքող ժողովուրդներին. „Նայեցէք ձեզ մօտ". . .

Եւ մենք, որ զոհ ենք վերջին քնութեամբ — միևնոյն տիեզերական ռէակցիայի՝ մենք այսօր քաղաքակրթութեան մէջ կատարւող այդ այլանդակութիւններից հրահանգւած՝ աւելի ուժգնութեամբ պիտի շեշտենք մեր սկեպտութիւնը պաշտօնական Եւրօպայի „մարդասէր" ու „ինքնայորդոր" միջամտութեան նկատմամբ և աւելի ևս պիտի ամրապնդենք ինքնօգնութեան մեր դաւանանքի մէջ։

Դրա հետ միասին չպիտի մոռանանք, սակայն, որ պաղ, անսիրտ պաշտօնական Եւրօպայի դիմաց օր աւուր աճում, ծաւալւում է նրա հակամարտ գործօնը՝ հասարակական կարծիքը։ Զառամեալ Եւրօպայում հիւղհետ ստեղանում է լէգիօնը այն վեհանձն դէմքերի, որոնք դիւանագիտական եղեռնագործութիւնների դէմ որոտալով միաժամանակ իրենց բուռն համակրանքն են յղում հայ մարտիկներին, խրախուսում են հայոց ազատութեան կռիւը։ Կարող ենք արդեօք պնդել, թէ հասարակական կարծիքը արհամարհելի մի մեծութիւն է, անապատի մէջ բառաչող մի ձայն։ Արդեօք Դելկասէի հայասէր ծանուցումները դեկտեմբերի 4-ի և յունուարի 20-ի պարլամենտական նիստում, արդեօք ֆրանսիական կառավարութեան ձեռք առած միջոցները ընդդէմ հայկական հնարաւոր ջարդերի՝ հետևանք չէի՞ն հանրային կարծիքի այն անսովոր բռնկման, որ արտայայտւեց յընթացս ամբողջ նախորդ թուականի և որ կենտրօնացաւ Pro Armenia-ի շուրջը։ Արդեօք Մարդակերը ջարդի հոյակապ ծրագիրներ չէ՞ր յղացել անցեալ տարւայ միջոցին Զէյթունի ու Սասնոյ լեռնավայրերում. . .

Բայց մասսային հեկատոմբների շրջանը, կարծէք, գոցւած է այլևս։ Տարակոյս չկայ, որ հայկական վիթխարի սպանդանոցը արեան թանձր ու միապաղաղ գոլորշիներով շատ է արդէն ցնցել եւրօպացիների, նոյնիսկ արիւնարուշտ դիպլոմատների ջղերը։

Մասսային հեկատոմբների շրջանն անցած... Որքա՜ն խղճուկ մխիթարութիւն։ Բայց ամենօրեայ դանդաղ նահատակութի՞ւնը։ Բայց հայաջինջ քաղաքականութեան սարսափնե՞րը, որոնք սպառնում են մի քանի տարուայ մէջ ամայի դարձնել շնչասպառ Հայրենիքը։ Բայց օրթոդոքսութեան սոսկալի ուրուակա՞նը, որ դեգերում է այսօր Մեծ Հայաստանի ամբողջ տարածութեան վրայ և որ եկել է այնտեղ նախամտածուած, որոշ ծրագրով...

Թերթեցէք „Դրօշակի“ և „Պրօ Արմենիայի“ տարուայ համարները և ուշի ուշով կարդացէք երկրի այլևայլ վայրերից ստացուած՝ արտասուաշարժ տեղեկագիրները։ Նման փաստերի միօրինակ ու տաղտկալի արձանագրութիւններ... Երբէ՞ք մի նոր շեշտ՝ „զա՞րկ ու հաւա՞ր“-ի այդ հսկայական ժխորի մէջ։ Առևտրի և հաղորդակցութեան խսպառ կաշկանդում, յետնեալ տուրքերի բռնի հաւաքումներ, քրդական արշաւանքներ ու ասպատակութիւններ, կանանց առևանգում, խմբովին բանտարկութիւններ, մանկի անպատիժ սպանութիւններ և իրրևմն ամենայնի լրտեսական մի ահարկու բանակ, որ իր անհամար ճիւղաւորութիւններով ցանցի պէս պատել է ամբողջ հայ աշխարհը, ձգտելով խեղդել իր ճիրաններում կեանքի և ազատութեան ամէն արտայայտութիւն։

Բայց կառավարչական տէռորը ուղղուած էր առանձնապէս Մուշ-Սասունի շրջանի վրայ, ուր հայ ստւար ազգաբնակութիւնը համեմատաբար քիչ էր տուժել 1895-ի մեծ ջարդերի միջոցին։ Ո՞վ գիտէ, ինչ ահռելի կատաստրոֆներ տեղի ունենային, եթէ յեղափոխական կազմակերպութիւնը ժամանակին չզարկէր ահակոչնակը և չմատնէր Եւրոպային սուլթանական դաւերը։

Սասունը շրջապատուեց կանոնաւոր զօրքերով ու քրդական աշիրէթներով, և Տալորիկի, Հէնիկի ու Գելիէգուզանի վրայ փորձեցին զօրանոցներ կանգնեցնել։ Քրդական վոհմակները ազատ համարձակ սկսեցին արշաւել Մշոյ դաշտի վրայ. ամբողջ գիւղեր թալանուեցին ու հրդեհուեցին։

Եւ այդ անդադրում ու սանձարձակ խժդժութիւնների դէմ պատւար էր կանգնած մեն-մենակ յեղափոխական փոքրամասնութիւնը, որը համատարած սարսափի ու յուսահատութեան մէջ կուռ ու կազմ շարունակում էր իր փշոտ ճանապարհը։ Ամբողջ տարուայ ընթացքում Մշոյ դաշտը ֆէդայական դաւադրութիւնների և տէռորական մոլեգին գործողութիւնների թատր էր։ Նեմրուտի հսկայի թիւրք ու հայ դահիճները մին-միւսի ետևից զոհ գնացին յեղափոխական վրէժխնդիր գնդակին։

Ահա Սերոբի քաջարի յետնորդները գաղտնի դարաններից յանկարծակի դուրս թռչելով՝ շրջապատում ու կոտորում են Հաջի Ֆէրրօյի աւազակային խումբը, որը հրահանգ էր առել տեղական իշխանութիւնից տակն ու վրայ անել ամբողջ Մուշը և ջնջել բոլոր ֆէդայիներին։ Ահա մի ուրիշ տեղ նրանք կուի են բռնում Ալայի բէյի հարիւր ձիաւորից բաղկացած բանակի հետ, որ պատրաստւում էր արշաւել Կուրտվու հայ գիւղի վրայ։ Ահա ֆէդայու վրէժխնդիր ձեռքը հասնում է նաև Պշարի Խալիլ աղային և Քօթանենց Շէրիֆ աղային— երկու Ազրայէլներ ևս խողխողւում են ի մեծ ցնծութիւն հայ ազգաբնակութեան։ Ահա վերջապէս Անդրանիկի և իր խմբի յանդուգն թռիչքը, որ եկաւ պսակելու հայադուկային գործողութիւնների այդ փայլուն շարքը։

Իրար ետևից գահավիժող դաւադրական այդ ձեռնարկները, որոնք անսովոր շփոթութիւն էին ձգել թշնամու շարքերում՝ կարող էին արդեօք չ՝ազդել, չցնցել տեղական հայ երիտասարդութիւնը... Ընդհանուր իրարանցումի, բոցավառուող գիւղերի և մահու օրհասական աղաղակների, ֆէդայիների մարտական հրաւէրի և զէնքի անընդհատ շառաչիւնի այդ սարսափեցնող ժխորի մէջ մատաղ սրտերը ուռչում, բարձրանում էին, յեղափոխական տրամադրութիւնը աճում էր հայրենիքում և նոր-նոր ուժեր վրէժխնդրութեան թոյնով լցուած՝ գնում էին միանալու կուսակցներին։

Կուի շռինդը արձագանքում էր և արտասահմանում. հայ դաղութները, ուր տարիներից իվեր բուն էին դրել այլևայլ քամելեօն-պոլիտիկաններ՝ հետզհետէ թօթափում են „հակայեղափոխութեան“ համաճարակը և— դէթ խօսքով - անցնում են կուսակցների կողմը։

Որքա՜ն վաստակ կարող էր ունենալ հայկական կռիւը, եթէ խօսքից գործի անցնէինք... Տարուայ անցքերի այս թռուցիկ տեսութիւնն անգամ բացորոշ կերպով հաստատում է, որ գործ շա՞տ կայ հայրենիքում, որ հողը պատրաստ է զինուած ու համատարած դիմադրութեան համար, բայց որ սո՞վ է գործիչների, սո՞վ է միջոցների...

Նախորդ տարին միանգամ ևս ցոյց տուեց, թէ որքան մեծ դեր է խաղում ա ն ա կ ն կ ա լ ը միջազգային քաղաքականութեան մէջ։ Ֆրանս-թիւրքական բարեկամական յարաբերութիւնները ընդամենը մի քանի շաբաթուայ տարածութեան վրայ լարուեցին ու յանգեցին սուր ընդհարումի։ Այդ ընդհարումը բաց արեց, այսպէս ասած, ճանապարհը՝ նորանոր առանձնակի միջամտութիւնների և ընդհարումների համար։ Պատրուակները չէին կարող պակսիլ։ Ամբողջ Եւրոպան դժգոհ է սուլթանից. ամբողջ անցեալ տարին յամառ մաքառումի մի թատրան էր Թիւրքիայի և հաւաքական Եւրոպայի կամ թէ այս կամ այն պետութեան միջև։

Հմուռանանք ներքին պատճառները ևս։ Դժգոհութեան ու խմորումի ալիքները ողողում են թիւրք կայսրութեան բոլոր տարրերը. տաճիկ, մակեդոնացի, արաբ, քիւրդ, ալբանացի—բոլորն էլ շատ թէ քիչ վարակւում են ընդվզումի փրկարար շնչով և ձգտումն են ցոյց տալիս իրար մերձենալու, միաբանելու։ Որքան և տարտամ ու երկչոտ լինեն համերաշխութեան այդ առաջին քայլերը, այնուամենայնիւ հանգամանքը ինքնըստինքեան ծանրակշիռ է և անկարելի է, որ նա իր ազդեցութիւնը չունենայ դիւանագիտական կոմբինացիաների վրայ՝ Թիւրքիայի նկատմամբ։

Մակեդոնեան արդէն բռնկուած է. այնտեղ ամէն օր— ձերբակալութիւններ, վայրենի հալածանք, զէնքի ներ-մուծում, հայդուկային կռիւներ, տէռոր... Գերագոյն կոմիտէն մեծ եռանդ ցոյց տուեց անցեալ տարւայ ընթացքում և միանգամայն խելացի ու համակրելի տակտիկով ներշնչուած՝ մօտեցաւ հայ յեղափոխական կազմակերպութեանը։ Առաջին անգամ հայ և մակեդոնացի զինուորները ձեռք ձեռքի տուած՝ „նմանը չտեսնուած“ ճակատամարտ տուին թիւրքաց զօրքին. առաջին անգամ հայ ու մակեդոնական արիւնը իրար խառնուեցին, և կռուի դաշտում ու Ադրիանուպոլսի կախաղանների վրայ նուիրագործուեց հայ-մակեդոնական եղբայրութիւնը։

Ուժ տանք ազգերի յեղափոխական եղբայրութեան, որ մի խոշոր գրաւական է մեր կռուի աջողութեան, բայց մանաւանդ ուժ տանք հայ մարտական կազմակերպութեանը։ Խտացնենք մեր եռանդը և պատրաստուենք մեծ հարուածի համար։ Փոքր ինչ կրա՞կ իւրաքանչիւր հայի մէջ — և մենք վստահ ենք յաղթանակի վրայ։

ՆԱՄԱԿ ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԷՆ

Նոյեմբեր 27-ին, երեքշաբթի օր, քաղաքիս չորս հրապարակներուն վրայ կախաղան հանուեցան չորս անձնուրացներ՝ երկու հայ, երկու պուլկար, Պետրոս Սէրէմ-ճեան՝ Ֆիլիբեցի, պուլկար բանակի պահեստի սպայ, Սվէտոսլավ Մերճանոֆ՝ գարնապատցի՝ Ժընէվի համալսարանէն, Օննիկ Թորոսեան՝ Թէքիրտաղցի և Խրիստո Հաճի Իլիէվ՝ մակեդոնացի։

Ընթերցողները կը յիշեն անշուշտ, ամառս, քաղաքէս ոչ հեռու, տեղի ունեցած հերոսական ճակատամարտը, զոր մղեցին 10 կտրիճներ երկու վաշտ հեռևակ և մէկ գունդ հեծելազօրի դէմ. այդ կռուի մէջ ինկան վեց հոգի և վիրաւոր գերի բռնուեցան չորսը, սպառելով իրենց վերջին փամփուշտը. կախաղան հանուածները այդ չորս գերիներն էին։

Երեքշաբթի առաւօտ կառավարութիւնը կախաղանի պատրաստութիւններ կը տեսնէր։ Ադրիանուպոլիսը, որ վաղուց է չէր տեսած կախաղան, արտասովոր յուզումի մէջ էր. հայերը և պուլկարները սուգի և միևնոյն ժամանակ ահ ու երկիւղի մէջ էին։ Կախաղաններուն շուրջը խռնուած ամբոխը, գլխաւորապէս տաճիկներ, յոյներ և հրէաներ, կրսպասէր դատապարտեալներու բերելուն։

Կառավարութիւնը երկիւղ կրելով բանտին մէջ խռովութիւն առաջ գալէ — Պետրոսը և իր ընկերները ահագին հեղինակութիւն էին ձեռք բերած բանտարկեալներու շրջանին մէջ—բանտէն դուրս կը հանէ տղաքները և առանց բան մը յայտնի ընելու՝ իրարմէ կը զատէ։ Երբ իւրաքանչիւրը կը տանին իրենց յատկացուած առանձին հրապարակները, այնտեղ մինակ կը հասկնան գլխնուն գալիքը։ Կախաղանի անակնկալ տեսարանը բնաւ չազդեր վրանին, կարծես շաբաթներով պատրաստուած ըլլային այդ սև ճակատագրին։ Կ'ըսեն միայն, որ Օննիկը, առաջին րոպէին քիչ մը այլայլեր է, երբ յանկարծ կախաղանը բացուեր է իր առջև, բայց անմիջապէս ինքզինքը ժողվեր, խրոխտաբար բարձրացեր աթոռի վրայ և իր կրակոտ խօսքը վերջացնելով առատ հայհոյանքներով սուլթանի հասցէին, ինքն իր վիզն է անցուցեր խեղդչանը։

Ինծի վիճակուած էր ականատես ըլլալ Պետրոսի նահատակման։ Դեռ երկար տարիներ անշէջ ու անմոռանալի պիտի մնայ էտիրնէցիներու յիշողութեան մէջ այդ հսկայ երիտասարդի եղերական մահը։ Առաջին անգամ կախաղանը նշմարելով ժպտաց և այդ արհամարհալից արտայայտութիւնը մինչև վերջի վայրկեանը մնաց։ Մերժեց քահանայէն հաղորդութիւն ընդունիլ. երբ քահանան հարցուց իրեն թէ ըսելիք բան մը ունի, պատասխանեց. „Բան մը չունիմ. արդէն տասը տարի է չանը վիզս էր, քաշող չի կար միայն. հիմակ, փառք Աստուծոյ, քաշողներ անպակաս են, ես իմ պարտականութիւնս կատարեցի ու մինչև կախաղան հասայ, խիղճս հանգիստ է. դուն ալ ինծի հաղորդութիւն առաջարկելով՝ պարտքդ կատարեցիր, հիմակ հանգիստ սրտով կրնաս երթալ“։

Բարձրանալով աթոռին վրայ, Պետրոսը դարձաւ ժողովրդին.

„Ձիս բերած են հոս կախելու, իբրև յեղափոխական. այո՛, ես յեղափոխական եմ, և մի մոռնաք, անմիտներ, գոչեց դահիճներուն, որ ես կը ներկայանամ կախաղանին առջև իբրև գաղափարի ներկայացուցիչ. ի՞նչ, գաղափա՞ր ալ կուզէք կախաղան հանել։ Դուք զիս կախեցիք, բայց ի՞նչ պիտի ընէք ան հարիւրները, հազարները, որ պիտի ծնանին աս կախաղանները, ի՞նչ պիտի ընէք, երբ հնչէ ընդհանուր ապստամբութեան ժամը։ Կախաղաններով չէ՞, որ բացուեցաւ Պուլկարիայի ազատութեան արշալոյսը. կախաղաններով չէ՞, որ նահանգ նահանգի ետևէ կտրուեցան ձեր նեխած դիակէն... Կախեցէք, միայն իմացէք, որ ամէն մէկ կախաղան խոր փոս կը փորէ ձեր սուլթանի գահի տակը“։—

Գազանները այստեղ այլևս չդիմացան. յարձակեցան Պետրոսի վրայ. Պետրոսը ուժեղ հարուածով յետ մղեց դահիճը և գոչելով. „չեմ ուզեր տաճկի ձեռքով կախուիլ“, ինք իր վիզն անցուց չանը և հրեց աթոռը... Պետրոսը արդէն լուռ էր, բայց որքա՜ն աւելի պերճախօս էր այդ լուռ, մեղմօրօր դիակը, ինչե՜ր չէր ըսեր ան իր հպարտ բարձրութենէն էտիրնեցի մեռած հայու մեռած հոգուն։

Սվէտոսլավ Մերճանոֆը կախեցին պուլկար ժիմնազիդիմաց, պուլկար մատաղ ուսանողներու սրտերը բորբոքելու և սարսափեցնելու նպատակով, իհարկէ։ Մերճանոֆը խօսեր է պուլկարերէն, իր երկար և սրտաշարժ ճառով ան բացատրեր է խմբի նպատակը, յեղափոխութեան անխուսափելիութիւնը, անոր անհրաժեշտութիւնը։ Ըսեր է, որ կախաղանէն չի վախնար, որ մտնելով յեղափոխական ասպարէզը, ինքը շատոնց արդէն ձեռք քաշած էր իր անձէն, զայն զոհ բերելով հայրենի ազատութեան, որ հեռու չէ։

Նոյնպէս խաղաղութիւնով մեռեր է Խրիստո Հաճի Իլիէվը, անտէր ձգելով իր կինը և զաւակները։

Այսպէս մեռան չորս անձնուրացները, քաջարի հայդուկները, խորապէս ցնցելով էտիրնէցիներու սառած հոգիները, վրէժխնդրութեան սրբազան կայծը դնելով մատաղ սրտերու մէջ...

Մենք շատ էինք լսած ու կարդացած ֆէդայիներու խմբերի մասին, բայց դեռ նոր տեսանք թէ ինչպէս կը կուռի ֆէդային, մենք շատ էինք լսած ու կարդացած

կախաղաններու մասին, այժմ մենք ևս տեսանք, թէ ինչպէս կը մեռնի յեղափոխականը:

Պէտք է սոսկայ բռնապետութիւնը, կախաղաններու բեմին վրայէն արձակուած ազատութեան նուիրական և հզօր աղաղակներէն:

Ցարգանք ձեզի, ազնիւ ու պաշտելի հոգիներ. ձեր վերջին կտակը և շունչը Մարիցայի ափերէն Մեղրագետի ափերը արձագանք պիտի գտնեն և հայ ֆէդային ու պուլկար հայդուկը իրենց պարտականութիւնը պիտի կատարեն խղճմտօրէն, այսինքն ձեր ծաղիկ արիւնին մեծ վրէժխնդրութիւնը:

ԿՈՉ

Տիկին Իլզէ Ֆրապան, որ բաւականաչափ յայտնի է գերմանական գրողների շրջանում: եւ որ աշխատակից է Deutsche Rundschau ամսագրի՝ հրատարակել է հետեւեալ կոչը՝ ուղղուած գերմանական աշխարհի գրողներին եւ օրագրողներին:

„Այն ժամանակ, երբ բոէրների հերոսական ու օրհասական կռիւը խորապէս ցնցում, յուզում է գերմանական սրտերը և գերմանացիների արդարութեան զգացումը— դժբախտ Հայաստանը արիւնոտուում է աշխարհիս ամենապժգալի բռնապետութեան ճանկերում— և Գերմանիայի կամ Աւստրիայի մէջ մի ձայն չէ բարձրանում, պարզ մարդկայնութեան, արդարութեան մի ճիչ՝ յօգուտ բռնութեամբ զինաթափ արուած և ապա խողխողուած հայ ժողովրդի:

„Եւ սակայն մեր պարտքն է, մեր, գերմանական գրողներիս մարդկային պարտականութիւնն է՝ շարունակ յիշեցնել, որ հայոց հարցը Բերլինի դաշնագրով մտել է միջազգային իրաւունքի մէջ և որ Հայաստանը եւրոպական պետութիւններից հովանաւորութիւն չպէտք է աղերսէ, այլ պիտի պահանջէ: Բայց գերմանական մամուլը այդ հարցում հեղգ է, եթէ ոչ բոլորովին համր: Մինչդեռ Ֆրանսիայում արդէն մի տարուց ի վեր՝ Քիառի, Անատոլ Ֆրանսի, Պրեսսանսէի, Կլէմանսոյի, Ժօռէսի և Դը Ռոբէրտիի խմբագրութեան ներքոյ հրատարակւում է Pro Armenia թերթը, որի կոչումն է՝ արդարութիւն ու օգնութիւն աղաղակել և հաղորդել ցանկացողներին, թէ որպիսի արեան տառերով է գրուած Հայաստանի պատմութիւնը ժողովուրդների Գրքի մէջ—հինգ տարուց իվեր Աբդիւլ Համիդը ջարդել, խեղդել և կամ թիւրքական սոսկալի բանտերում սով ու տանջանքներով սպանել է տուել 300,000 հայ — Գերմանիայում ամենաշատը տեսնում ենք միայն կարճ, սակաւ տողերից բաղկացած տեղեկութիւններ անվերջանալի կոտորածների մասին, տեղեկութիւններ՝ առանց տաքութեան ու համակրութեան, որոնք աւելի վատ են, քան ոչինչը:

„Ցարգելի կօլեգներ և կօլեգուհիներ. թօթափե՛նք գերմանական աշխարհի համար անպատուաբեր այդ հեղգութիւնը: Գիտակցենք, որ մենք գրողներս ենք, որ պիտի առաջ տանենք իրաւունքի և մարդկայնութեան դատը: Խեղդեցէք ձեր ըմբոստացման թափով անարժան ձայնը՝ „շահ չունինք դրանից“: Յիշեցէք, որ մեծ պետութիւնները և ժողովուրդներն իսկ իրենց անշարժութեամբ մեղսակից են այն ահռելի գազանութիւնների մէջ, որոնք ամէն օր կատարւում են Հայաստանում: Տեղեկացէք մարդկային իրաւունքների այն բռնաբարումների մասին, որ անպատիժ կերպով գործում են հայ ժողովրդի նկատմամբ և սկսեցէք մի ուժեղ պրոպագանդ նաև Գերմանիայում ու Աւստրիայում: Մենք պէտք է միջամտութիւն առաջ բերենք: Հնչեցրէ՛ք միևնոյն կոչը, որ արդէն հնչում է Ֆրանսիայում. Pro Armenia!“:

ԻԼԶԷ ԳՐԱՊԱՆ

Համբուրգ

ՍՎԻԱՏՕՍԼԱՎ ՄԷՐՋԱՆՕՖ (բուլգար)

Կախուած երկու հայերի հետ 9 դեկտ. 1901 Ադրիանուպոլսում

Svetoslav MERDJANOF (Bulgare)

Pendu le 9 décembre 1901, à Adrianople.

ԿԱԽԱՂԱՆԸ

ՍԱՏՐԱՊԱՄ ՍԱԳԻՈ ՓԱՇԱՅԻՆ

Սուլթան Համիդի անարժան փատիշահութեան օրով, պ. վէզիր, դուք, Էրզրում անգամ ըլլալով, սատրապամութեան կը կանչէիք: Ձեր վէզիրութիւնը մտքերը անվճռական և սկեպտիկ դրութեան մէջ կը դնէ. զի յայտնի չէ երկիրը փրկելու հրաւիրուած էք թէ սուլթան Համիդը, որ՝ քաղաքական ճգնաժամի մը՝ ձեր խոնարհ և քէօլէ աջակցութեան կարօտը կը զգայ, Արթին փաշայի մահէն անմիջապէս ետքը, վստահելով ձեր... փորձած հաւատարմութեանը վրայ, դէպի ձեր երկիրը. գուցէ անորհամար, որ վերջի մեծ երկրաշարժին, երբ ամէն մարդ սարսափահար դուրս կը

փախչէր Տօլմա պաղչայի սերայէն, դուք ձեր տիրոջ քով պաղարիւն մնալու քաջութիւնը ունեցաք։

Դուք հին թիւրքերէն էք, հին թապու մը, որոնք Թիւրքիոյ „հիւանդ մարդ“ կորստաբեր տիղղոսը տալ տուին։ Ձեր անորոշ անցեալը, ձեր կեղծաւոր ու փոքրոգի մեղսակցութիւնը Թիւրքիոյ բարենորոգումներու հեղինակներուն և հաստատութիւններուն դէմ, բարձր հաւաստիք մը չի տար ձեր ապագայ ճամբու մասին, հակառակ ձեր հանած ազատամիտ համբաւին և հայրենասիրութեան, թէև երեք քառորդ դար ապրած ըլլաք կեանքի ովկէանին մէջ։ Դուք երկրին սանձը ձեռք կառնէք—եթէ կարելի է այսպէս ըսել—կախաղանները նորէն տնկելով, որոնք ձեր վեհապետին գահը նստելէն իվեր, քանի քանի հեղ ազատութեան հելլոններուն ճօճիլը տեսած են, Կարինէն Պոլիս, Պոլսէն Մակեդոնիա։

Բայց ինչ որ կը թելադրէ և անդրադառնալ կուտայ մեզի, ձեր ամուլ աշուններ են, որոնք ձեր գլխուն մէջ իմաստուն և բարոյական քաղաքականութեան պտուղները չեն տուած։

Հինգ տարի առաջ դուք փառաւոր և անժխտելի ապացոյց մը տուիք Թիւրքիոյ ներքին դժոխային դրութեան, ձեր արիւնարբու տիրոջ վրէժխնդրութեան երեսէն Անգլիոյ դեսպանատունը ապաւինելով, ինչպէս երբեմն մահապարտները անբռնաբարելի տաճարներու մէջ կ'ապաստանէին, և անկէց իվեր ձեր պարտէզին մէջ կաղամբ կը մշակէիք։ Սակայն երբ կոյր և հեգնող բախտը ձեզ Տարպեան ժառայէն Կապիտոլ առաջնորդեց, մոռցաք ահաւոր օրերը և էյիշեցիք ձեզի վիճակակից ժողովուրդներու դրութիւնը, և ոչ ալ կեանքի դպրոցին մէջ աշակերտած ըլլալու նշանները կը ցցնէք։

Երբ եւրոպացի պետական անձնաւորութիւն մը կ'առանձնանայ—իմացական կղզիացում մը—տքնաջան աշխատութիւններով կ'ուսումնասիրէ, կը հետևի մարդկային և բնական օրէնքներուն բնաշրջումին, այնպէս որ երբ օր մը, ազգը պաշտօնի կը կանչէ այդ հասուն մարդը, անոր մէջ կուզէ տեսնել ազգային և արդարութեան պահանջներուն համապատասխան քաղաքագիտական բարձր առաքինութիւններով ու փիլիսոփայական ու հասարակական խորհրդածութիւններով օժտուած պետական գործիչ մը։ Այդպէս պէտք է ըլլան ժողովուրդներու ճակատագիրը իրենց ձեռքին մէջ կրել յաւակնողները։ Դուք պ. Նախարար, երբ ձեր վեհապետը դուրս քաշեց ձեզ ձեր խօնախէն կամ որջէն—յաճախ հարէմներու ծոցէն—ուր փակուած էիք դողահար, կըսպասէր որ աւելի լայն և խելացի աշխարհահայեցողութիւնով պատրաստուած ու խանդավառուած քաղաքական բեմը բարձրանայիք։

Ձէ դուք ձեր պետական գործունէութիւնը կըսկսիք ահաբեկող վայրագ հարուածով մը, կախաղան հանելով ձեր երկրին գազան և զզուելի բէժիմի դէմ մաքառող ազնիւ հոգիները։ Ահա ապացոյց մը որ դուք տարիներու ծանր բեռին տակ կը կրէք անուղղայ և դատապարտուած կնիքը ազգի մը, որուն ժառանգական տգեղութիւններէն չէք կրնար խուսափիլ։

Դուք, իբրև ազգ, հետևապէս իբրև պետութիւն, երկիր կառավարել չպիտի սորվիք. ապացոյց մը, որ ձեր 19 տարեկան լակոտը պետական խորհրդի անդամութեան կը կոչէր թրքական ծոյլանհոգութեամբ մը, երբ ձեր տղան դեռ վարտիքը իսկ չի կրնար կապել, և այսպէս, երկրի մը խորհող գլխուն, երախայական ու խաղալիքի ձև կուտաք։

Ի՜նչ կախաղաններ, ի՜նչ դիւցազն մահեր տեսաւ Թիւրքիան, ի՜նչ ազնիւ գլուխներ ինկան ձեր չարագործ բռնաւորներուն և վէզիրներուն քմահաճոյքներուն զոհ, որոնք մարդկութեան և ձեր երկրին լաւագոյն ծաղիկներէն էին թերևս, և որոնց դժբախտ մահերուն ականատես եղած էք ձեր կեանքի անզգայ և շլայտ ուղևորութեան մէջ։ Սակայն և այնպէս շուտ մոռցան Թիւրքերը կախաղաններու նշանակութիւնը, որոնք յաճախ ազատութեան բեմեր են։

Մարիցայի ու Դանուբի ափերուն վրայ կամ Փիլիպպէի դաշտերուն մէջ—ուր Կեսարի հոգեստուերը ազատութիւնը կը հալածէր—դուք կախաղանէ տեղափոխուող անտառներ տնկեցիք ձեր անպարկեշտ բէժիմը պաշտպանելու համար։

Եթէ չենք սխալիր դուք ծամծմեցիք և փորձեցիք վերակրկնել սա հին խօսքը թէ հայկական հարցը մարելու համար հայերը բնաջինջ ընելու է։ Դուցէ վայրագ օրինակով մը ուզեցիք հասկցնել թէ հայկական հարցը չի մեռնիր։ Տեսականին և գործնականին մէջ ձեր բնազդներուն և հակումներուն տեղեակ ըլլալով, թոյլ տուէք պ. նախարար, կրկնել սա դառն ճշմարտութիւնը, որ դուք դահիճ ըլլալու սահմանուած կառավարութիւն մը չէք, առանց իդէալի և զգացումի, հակառակ Պիզմարքի շահատես կարծիքին թէ „թիւրքերը արևելքի ճենթլմէններն են“։ Ձենք ուզեր ձրի մեղադրել նաև ժողովուրդ մը, որուն յանցանքն է իր տգիտութիւնը և մոլեռանդութիւնը, բայց երբ այդ ժողովուրդը կը գինովնայ պատուհաս բռնակալութեան դէմ կուող հերոսներու գլուխները կտրելով՝ ձողերու վրայ քաղաքէ քաղաք ման ածելէ և երբ ձեզի պէս լուսամիտ կարծուած չար պտուղներ կուտայ այդ ծառը—որ պատմութեան կը վերաբերի—անողոք դատաստան ընելու հարկին մէջ կը գտնուինք։ Մէկհատիկ ազգն է գուցէ աշխարհի մէջ. որ մարդկութեան և ազգերու սրտին մէջ երախտագիտութեան ճառագայթ մը չի կրցաւ խլել այն երազէն իվեր, երբ գեղանի Մ'ալխաթունի ծոցէն մահիկը կը բարձրանար և Օսմանի ծոցը կը մտնէր կամ Օսմանի երիկամներէն տիեզերքը հովանաւորող անհուն ծառը կը ծնէր։

Դուք, պ. վէզիր, ըլլալով համիսլամական դաշնակցութեան գրեթէ հիմնադիրը և պաշտպան սուրբերէն մէկը, այդ կէտը արդէն բաւական է որ դուք մոլեռանդութեան կռնակ տուած, ձեր երկրին բարոյական և գերագոյն շահերը հիմնէք *fatum mahometanum*-ին վրայ ճիհատի կուսակից։ Այսքանը բաւական է արդէն ձեր իդէալին ու կարողութիւններուն վրայ լոյս սփռելու և մանաւանդ ձեր հպատակ անտէր ազգերը, իրաւունք ունին, այդքան կուռ և վայրենի կրօնամոլութիւնով զրահաւորուած բէժիմի մը դէմ իրենց գոյութիւնը պաշտպանելու միջոցներուն վրայ խորհիլ։

Դուք կը պատճառաբանէք անատեն երբ ձեր կաշին փորձանքի մէջ է. երբ ձեր խալիֆան Պլինիոսի ազդու բացատրութիւնով Դոմետիանոսի մասին „իր քարայրին մէջ փակուած գազան մը որ հանգիստ հանգիստ իր մերձաւորներու արիւնը կը խմէ“։

Պէտք չէ՞ր, որ ձեր անձնական դառն փորձառութեանը բարեացակամ պատուէրները ծառայեցնէիք ձեր երկրի բարեկարգութեան և ողջամիտ վեհանձնութեան օրինակը տայիք, թափանցելով երկրի կործանումին խորունկ ու թաքուն պատճառներուն և կշռադատ միտք մը դնէիք ձեր

ընթացքին մէջ, քանի որ Թիւրքիոյ զ ա ր ը կը յաւակնիք բռնել ձեր դողդոջ ձեռքերուն մէջ, սրբելով ձեր նախկին արատը և անհեռատեսութեան աղէտները։ Դուք ձեր բացած վէրքերուն վրայ, ափսոս, չունիք Աքիլլէսի նիզակին զօրութիւնը։ Հին ս ի ս տ է մ ն է նորէն, զոր կուզէք գործադրել. օսմանեան եաթաղանի և անպատիժ եղեռնագործութեան քաղաքականութիւնը կը լլկէ, երևի, ձեր գագաշ ուղեղը, սնած մ ա պ է յ ն ի ն ճահճային մթնոլորտին մէջ, ուր աւելի ջարդերու ու դաւաճանութեան ծրագիրներ կը յղացուին ու կը մշակուին, քան ժողովրդի բարօրութեան ազնիւ գաղափարներ։ Անպիտան ստամոքս մը, որ հին առածին պէս, իր անգամները պահպանելու ազնուութիւնը անգամ չունի։

Եթէ ձեր ձեռնոցները կը նետէք այնքան ամբարտաւանօրէն ստրուկ ազգերուն, զորս անպատիժ կը հարստահարէք և կ'ահաբեկէք, մահ սպառնալով անոնց, կը սխալիք, անոնք շատոնց ջղայնացած են ձեր մենամարտէն, և ձեր... հպատակասիրութենէն։ Չէ՞ք գիտեր, որ արիւնը արիւն կը պահանջէ։ Ուրիշ ճամբայ որոնեցէք, արիւնի հեգնութիւնը ձեզի պահելով։

Կը կասկածինք ձեզմէ, ինչքան ալ կոյրերուն մէջ միականի մը ըսեն, զի չունիք դուք ազատական աւանդութիւններու հօրենական հպարտ ժառանգութիւն մը, և դուք, իբր ծերուկ աղէս. և անպատասխանատու խալիֆայութեան հովանաւորող, քաղաքական կեղծ առաքինութեան տակ պիտի հետևիք ն ա մ է ր դ և բաշիպոզուկ քաղաքականութեան, որուն խաղալիքները և զոհերն ենք դարերէ իվեր։ Պետական պատճառը և իսլամութեան շահը ձեր չորցած ձեռքերուն մէջ, զոր կը ջանաք շատ վարպետօրէն գործածել, երևոյթները պարտկելով, աւելի ազետալի կը թուին ըլլալ։

Ինչո՞ւ չէք պատժեր անոնք, որոնք երկիրը սարսափի մէջ կը պահեն, ինչո՞ւ կապրին մարդասպանները, այլասեռածները, որոնք կը վխտան պալատներուն մէջ և պալատներէն դուրս։ Ո՞վ պիտի տայ հաշիւ համար պաշիպոզուկ կառավարութեան թափած արիւնին։

Պ. նախարար, դուք պէտք էիք բաւականանալ ձեր փատիշահներուն ու վալիներուն գործած յաւիտենական դարերու բաւական եղող ոճիրներով, ձեր երկրին սարսափի տարիներով, թափուած ջրհեղեղ արիւնով ու դիակի կոյտերով, որոնց գլուխներէն Լէնկթիմուր կարող էր քանի մը բուրգեր կանգնել, և իբր հեռատես ու փորձեփ մարդ ըսէիք. *Est modus in rebus* — ամեն բան չափ մը ունի։

Պէտք էիք խաղաղութեան, արդարութեան և հոգիի մեծութեան ազատ նոր թեւական մը բանալ ձեր անիծեալ երկրին տարեգրութիւններուն մէջ, դուք պէտք էիք ընտրել Համիդներէն տարբեր ուղղութիւն մը, աւելի մարդաշահ, աւելի անաչառ, աւելի սիրաշահող. դուք պէտք էիք Օժեասի ախոռը մաքրել, որ կ'ապականէ երկիրը, և ոչ նոր ամպեր կուտակել։

Նենգամիտ, տգէտ, մոլեռանդ, ահա այն տիտղոսները, որոնք փատիշահները ու վէզիրները իրարու կը փոխանցեն ազգային նախանձախնդիր աւանդութիւնով մը։

Ձեր նախարարութեան առաջին քայլը յուսախաբ և հիասթափ կ'ընէ հանդիսատեսները, դուք իբրև թիւրք չէք կարող ձեր ճերմակ մազերուն բոլորտիքը անքիծ լուսապսակ մը անցնել։ Ոճրագործ վեհապետի մը անիրաւ գործիքը ըլլալու ամէն պատրաստականութիւն կը ցցնէք։ Եւ գուցէ հեռու չըլլայ այն օրը, երբ ձեր մարդասպան տէրը սա օրհասական բացականչութիւնը ընէ.

— *Acta est fabula.*

Դուք փութաք պատասխանել.

— Էվէթ էֆէնտիմ։

Թաւականացէք պ. վէզիր ձեր ճերմակ մազերը արիւնով հինայելէ և սոսկացէք մանաւանդ կախաղանի բարձրէն արձակուած աղաղակներէն։

Կախաղանները անատեն փրկարար են երկրի մը համար, երբ անոնց վրայ բռնակալները կը բարձրանան։

ԻԼԶԷ ՖՐԱՊԱՆ՝ իր կտրուկ ու կորովի կոչը հրատարակելով՝ միաժամանակ ուղարկել է „Դրօշակի խմբագրութեան մի գեղեցիկ յօդուած, որը մի խանդավառ ներբող է տաղանդաւոր բանաստեղծ-գրողի կողմից՝ ուղղուած հայ յեղափոխական դիւցազներգութեան, նրա հերոսներին։

Ահաւասիկ այդ յօդուածն իր ամբողջութեամբ։

BRIEF AN DEN „DROSCHAK"

Motto :

Wenn der Gedrückte nirgends Recht kann finden,
Wenn unerträglich wird die Macht,
Greift er hinauf getrosten Mutes in den Himmel
Und holt herunter seine ewigen Rechte,
Die droben hangen — unveräusserlich
Und unverlöschbar wie die Sterne selbst.
Der alte Urstand der Natur kehrt wieder,
Wo Mensch dem Menschen gegenübersteht.
Zum *letzten Mittel*, wenn kein andres mehr
Verfangen will, ist uns das Schwert gegeben.
— — Wir dürfen uns verteidigen gegen Gewalt.
Wir steh'n für unser Land!
Wir steh'n für unsere Weiber! unsere Kinder!

(Schiller, aus « Tell ».)

Hochgeehrte Herren !

Im Schlafen wie im Wachen verfolgt mich das blutige Bild des unglücklichen, vergewaltigten, von den christlichen Nationen Europas feige und meineidig verlassenen Armeniens. Was die Armenier dulden,

ՆԱՄԱԿ „ԴՐՕՇԱԿԻՆ"

Երբ որ ճնշուածն այստեղ՝ աշխարհում
Դատ ու իրաւունք բնաւ չի գտնում,
Երբ որ բռնութեան լուծը գարշելի
Դառնում՝ ստրկին անհանդուրժելի,
Նա իր ձեռքերը երկինք է մեկնում,
Եւ վստահօրէն այնտեղից խլում
Իր իրաւունքներն յաւիտենական,
Որոնք երկնքի աստղերի նման
Անշարժ, անվախճան անհունին փարած՝
Մնում՝ են այնտեղ յաւիտեան կախուած.
Բնութեան նախնի վիճակն է հասնում,
Երբ մարդը մարդին ոսոխ էր դառնում:
Երբ էլ ճար չունինք, սրին ենք դիմում.
Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում
Ընդդէմ մեզ ճնշող անարգ բռնութեան
Պաշտպանում ենք մեր կին ու երեխան:

(ՇԻԼԼԷՐ, „ՏԷԼ")

Մեծարգոյ պարոններ,

Քնած, թէ արթուն ժամանակ հալածում՝ է ինձ դըժբախտ, բռնաբարուած, եւրոպական քրիստոնեայ ազգերից անարգօրէն ու դաւաճանօրէն լքուած Հայաստանի արիւնոտ ուրուականը։ Հայերի կրած տառապանքները արտա

klingt in einem einzigen empörten Schrei nach Hülfe und Rache zusammen, und mein Verstand will es nicht verstehen, mein Herz will es nicht glauben, dass dieser furchtbare Aufschrei kein Echo weckt in unserem Vaterlande, dass Deutschland heute wie ein kalter, toter Felsen scheint, von dem keine Sympathie für die Leidenden, kein Verständniss für die verzweiflungsvoll Ringenden, keine Begeisterung für die heldenhaft Unterliegenden zu erwarten ist. Wie viel weniger denn Hülfe!

Ja, das Deutschland von heute ist ein trauriges Reich! Die Türkenfreundschaft Wilhelms II trägt uns bittere Früchte. Eine verbrecherische Gleichgültigkeit, eine mattherzige Gesinnungslosigkeit der Nation ist bei uns eingerissen. Und doch war unser Volk einst voll grosser Ideen der Menschenbefreiung, und es war ein deutscher Dichter, der das Hohelied der Freiheit, der den « Wilhelm Tell » in Flammenworten gültig für alle Völker und alle Zeiten hinausgesungen hat. Es thut not, sich heute daran zu erinnern, dass unseres edelsten Dichters, dass Schillers Freiheitsdrama « Tell » einmal in Deutschland glühende Begeisterung und Nacheiferung erweckt hat; es thut not, daran zu denken, um nicht in diesen jämmerlichen Zeiten vor Bitterkeit über die eigenen Volksgenossen ersticken zu müssen!

Hochverehrte Herren, lassen Sie mich den Geist Schillers beschwören, damit er Ihnen an Stelle der heutigen Deutschen, die ihre Stimme in den Fragen der primitivsten Humanität nicht mehr zu erheben wagen, wenn die Regierung es verbietet, sage, wie wir Deutschen trotz alledem mit Ihrem unglücklichen Volke tief zu fühlen vermöchten, wie leidenschaftlich wir Armeniens Erhebung, Armeniens Befreiung ersehnen müssten, kraft unserer in Schiller verkörperten Volksindividualität, — wenn wir nicht heute klein geworden wären durch die Beschäftigung mit Kleinigkeiten, zu klein ach, um die heroische Zeit eines andern Volks noch recht zu verstehen!

Denn heute herrscht der Händler, und unsere Welt, die sich selbst die zivilisirte nennt, ist nichts als eine ungeheure Trödelbude! Schachern und Verschachern ist ihr das einzige Wichtige. Und die unabsehbaren stehenden Heere sind dazu da, den reichen Händler zu schützen, ihm « neue Absatzgebiete zu öffnen ». Und machtlos verhallt im Geschrei des Marktes die Stimme der stets gepriesenen und nie gehörten Humanität, der Gerechtigkeit, der Empörung!

So steht es im alten Europa. Sie aber, Ihr in uralt-sagenhafte Zeiten hinaufreichendes Volk, ist blutjung gegen uns! Sie haben noch Helden, Sie haben noch Märtyrer, die leuchten, gross und klar wie Sterne auf dem blutigstem Himmelsrot. Unter den furchtbarsten Greueln, die je die Welt gesehen, unter dem unmenschlichsten Druck sind in Armenien Taten erwachsen von biblischer Wucht und Grösse! Ich habe mich vertieft in die entsetzlichen Berichte armenischer Leiden und Marter, und wäh-

յայտնում են ընդվզումի մի աղաղակով, օգնութեա՞ն ու վրէժխնդրութեա՞ն մի միայնակ կոչումով և իմ բանականութիւնը չի ուզում հասկանալ, իմ սիրտը չի ուզում հաւատալ, որ այդ զարհուրելի աղաղակը ոչ մի արձագանք չի գտնում իմ հայրենիքում, որ Գերմանիան այսօր հանդիսանում է պաղ, անկենդան մի ապառաժ, որից չի կարելի ակնկալել ոչ մի կարեկցութիւն դէպի տանջուողները, ոչ մի հասկացողութիւն յուսահատ մաքառողների համար, ոչ մի ոգևորութիւն դիւցազնաբար նահատակուողների դիմաց։ Օգնութեան մասին խօսք անգամ չի կարող լինել։

Այո, այսօրեան Գերմանիան տխուր մի աշխարհ է։ Վիլհելմ II-ի բարեկամութիւնը Թիւրքի հետ դառն պտուղներ է բերում մեզ։ Մի ոճրագործ անտարբերութիւն, մի թուլասիրտ անգաղափարականութիւն է մտել մեր մէջ։ Եւ սակայն երբեմն մեր ժողովուրդը տոգորուած էր մարդկային ազատագրութեան մեծ գաղափարներով և գերմանացի մի բանաստեղծ էր այն, որ ազատութեան վսեմ երգը հնչեցրեց, և որ բոցաշունչ խօսքերով երգեց „Վիլհելմ Տէլ“-ը՝ վաւերական բոլոր ազգերի և բոլոր ժամանակների համար։

Հարկ կայ՝ մտաբերելու այսօր, որ մեր ազնուագոյն բանաստեղծի, Շիլլէրի ազատական դրաման, „Տէլ“-ը, մի ժամանակ բուռն ոգևորութիւն ու մրցակցութիւն է յարուցել Գերմանիայում։

Հարկ կայ՝ անդրադառնալու այդ հանգամանքի վրայ, որպէս զի այս գձուձ ու ողորմելի ժամանակներում չխեղդուենք այն դառնութիւնից, որ զգում ենք հարազատ ազգակիցների դիմաց։

Մեծարգոյ պարոններ, թոյլ տուէք ինձ Շիլլէրի ոգին դուրս կանչել, որպէս զի նա—հակառակ այժմեան գերմանացիներին, որոնք ամենապարզ մարդկայնութեան խնդիրներում անգամ չեն համարձակւում իրենց ձայնը բարձրացնել, եթէ կառավարութիւնը արգելում է այդ—ասէ ձեզ, թէ ինչպէս մենք գերմանացիներս՝ Շիլլէրի մէջ մարմնացած մեր ազգային անհատականութեան շնորհիւ խորապէս կը կարեկցէինք ձեր տարաբախտ ժողովրդին, թէ որքան խանդագին մենք կը բաղձայինք Հայաստանի ապստամբութիւնն ու ազատագրութիւնը, և թէ այսքան մանրացած չլինէինք այսօր մեր պարապմունքների շնորհիւ, չափազանց գձուձ, աւա՜ղ՝ մի ուրիշ ժողովրդի հերոսական շրջանը ըմբռնելու համար։

Այսօր իշխում է առևտրականը, և մեր աշխարհը, որ ինքն իրեն քաղաքակիրթ է անուանում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հսկայական հնավաճառանոց։ Ծախել ու շահել—այս է նրա համար միակ կարևորագոյն բանը։ Եւ անթիւ մնայուն զօրքերը կանգնած են միայն նրա համար, որ հովանաւորեն հարուստ վաճառականին, հայթայթեն նրան արտահանութեան համար նորանոր վայրեր։

Եւ անզօր հնչում է շուկայի այդ ժխորի մէջ միշտ փառաբանուած և երբէք չլսուած՝ ձայնը մարդկայնութեան, արդարութեան և ըմբոստացման։

Այդպէս է իրերի վիճակը պառաւ Եւրոպայում։ Իսկ դուք, մինչև նախնական-առասպելական ժամանակները հասնող ձեր ժողովուրդը, մեզ հետ համեմատած՝ արիւնով թարմ է, երիտասարդ։ Դուք դեռ ունիք հերոսներ, դուք ունիք նահատակներ, որոնք շողշողում են աստղերի պէս մեծ ու պայծառ՝ ամենաարիւնոտ երկնակամարի վրայ Ամենահռելի խժդժութիւնների ներքոյ, աշխարհիս

rend mir das Herz blutete um das Schicksal der Verfolgten, Gemordeten. erbebte es auch vor Bewunderung und Freude. Ein ungeheures Schauspiel bot sich mir dar. Auf der einen Seite Blutgier und viehischer Uebermut und fanatische Grausamkeit einer stumpfsinnigen, rohen, bildungsunfähigen Völkermasse. Auf der andern Seite der selbstverleugnende Opfermut, die eherne Standhaftigkeit eines kultivirten, und nach höherer Kultur strebenden, aufnahmefähigen, hochbegabten Volks. Ich sah die Bilder jener armenischen Helden und Märtyrer, die sich nicht beugten und sich nicht ergaben, die weder türkischer Fanatismus noch kurdische Grausamkeit schrecken konnte, und deren glorreiches Leben und glorreiches Sterben Zeugniss ablegte von einer ungebrochenen, urwüchsigen Volkskraft, von der Unzerstörbarkeit der armenischen Rasse ! Bilder der körperlichen Kraft und des Mutes, und Bilder hoher Schönheit, diese Männer alle, mit den lockigen Bärten, mit den scharfen, stark ausgeprägten Zügen voll Entschlossenheit und konzentrirtem Wollen, — diese Jünglinge, fast Knaben noch, mit den grossen, finstern, von Geist und Leben blitzenden Augen ! Eine wahre Heldensaat !

Und die armenischen Frauen, dies tapfere, uns schwachen Europäerinnen so ganz unähnliche, tüchtige Geschlecht ! Haben nicht die armenischen Frauen Taten ausgeführt, dass einem das Herz klopft beim Wiedererzählen ? Kein Dichter könnte Stärkeres ersinnen, als jene Rachetat der jungen Esther, des kühnen Mädchens, das den frechen Schänder ihrer Ehre, den Kurdenhäuptling Sheriff Agha mit eigner Hand erdolcht hat ! Ewiger Ruhm ihrem Namen und ihrem Andenken !

Und ewiger Ruhm jenen armenischen Frauen, die es gewagt, im Gebiete von Sassun die Kasernenbauten der Türken zu zerstören, ganz wie dereinst die Schweizer Bauern das feste Schloss Zwing-Uri abgetragen und zerstört haben, das ihre Unterdrücker im Kanton Uri erbaut hatten, um ungestraft das Land knechten und ausrauben zu können. Dass es hier Frauenhände waren, die das Zerstörungswerk vollführten, erhöht den Wert und die Bedeutung der mutigen Tat.

Aber auch jene verzweifelten Totsucherinnen umstrahlt noch Ruhmesschein, die sich an den Händen haltend, in Schaaren in den Euphrat hinabsprangen, um ihren eignen Tot zu sterben und nicht den Tot, der ihnen in den Händen der erbarmunglosen, entmenschten Feinde wartete.

Auch zu ihrem Sterben bietet Schillers Tell die erschütternde Analogie. Dort spricht der Schweizer Bauer Stauffacher mit seiner Gattin, der tapfern und klugen Gertrud, die ihm zum Widerstande, zur Empörung rät. Stauffacher ist bedenklich, denn er liebt seine Frau. Er spricht: « Wir Männer können tapfer fechtend sterben. Welch Schicksal aber wird das eure sein » ? Und Gertrud antwortet ihm

ամենատմարդի ճնշումների տակ՝ Հայաստանի մէջ ծնունդ են առել գործեր բիբլիական կշռի և մեծութեան։ Ես ուսումնասիրել եմ հայոց տառապանքների ու նահատակութեան սոսկալի տեղեկագիրները և մինչդեռ իմ սիրտը արիւնոտւում էր հանդէպ հալածուածների ու մորթուածների ճակատագրին՝ ես միաժամանակ ցնցւում էի հիացմունքից ու բերկրանքից։ Մի հոյակապ դրամա էր ներկայանում իմ առջև։ Մի կողմից՝ արիւնռուշտ, անասնական ամբարտաւանութիւն ու մոլեռանդ բարբարոսութիւն մի բթամիտ, վայրագ, կրթութեան անընդունակ, ըստ ամենայնի յետամնաց ժողովրդային մասսայի. միւս կողմից՝ անձնուրաց զոհողութիւն, երկաթէ դիմացկանութիւն մի կուլտուրական, բարձր քաղաքակրթութեան ձգտող, մեծապէս օժտուած ազգայնութեան։

Ես տեսել եմ հայ հերոսների ու նահատակների պատկերները—հերոսներ, որոնք չէին խոնարհւում, չէին անձնատուր լինում, որոնց չէր սարսափեցնում ոչ թիւրքական ֆանատիկոսութիւնը, ոչ էլ քրդական վայրագութիւնը, և որոնց փառահեղ կեանքն ու պանծալի նահատակումը վկայ են մի անընկճելի, ինքնակայ ժողովրդային ուժի, վկայ են հայկական ցեղի անչնջելիութեան։ Պատկերներ՝ ֆիզիքական ուժի ու արիութեան, և պատկերներ՝ ընտիր գեղեցկութեան, — այդ երիտասարդները իրենց գանգրաւոր մօրուքներով, սուր ու ցայտուն դիմագծերով, լի վճռականութեամբ և խտացած կամեցողութեամբ,— այդ պատանիները, գրեթէ տակաւին մանուկներ՝ խոշոր, նրբագեղ, կեանք ու ոգի կայծակող աչքերով... մի ճշմարիտ հերոսացանք...

Հապա հայ կինե՞ը, այդ քաջարի, մեր եւրոպուհիներից միանգամայն տարբեր՝ շնորհալի սերունդը։ Նրանք չե՞ն, որ կատարել են գործեր, որոնց պատմելու միջոցին սրտեր են բաբախում։ Ոչ մի բանաստեղծ չէր կարող յղանալ աւելի զօրեղ մի բան, քան վրէժխնդրութեան այն ակտը, որ կատարեց մանկահասակ, աներկիւղ Եսթերը, սեփական ձեռքով դաշունապարկ անելով իր պատիւը բռնաբարող քրդական պետ՝ Շէրիֆ աղային։ Յաւերժական փա՞ռք նրա անուն ու յիշատակին։ Յաւերժական փառք նաև այն հայ կանանց, որոնք խիզախեցին քանդել Սասնոյ լեռնավայրում կառուցած թիւրքական զօրանոցները, ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ շվէյցարական գիւղացիները փլատակեցին Ցվինգ-ուրի ամուր դղեակը, որ թշնամին կանգնեցրել էր Ուրի կանտօնում՝ երկիրն անպատիժ կերպով ստրկացնելու և թալանելու համար։ Ո՞ր այստեղ կանացի ձեռքեր են կատարել աւերումի այդ գործը—դա աւելի ևս բարձրացնում է նրա արժէքն ու նշանակութիւնը։

Բայց փառքի փայլը ճառագայթում է նաև այն հայ կանանց վրայ, որոնք յուսահատութիւնից մահ էին փնտրում, որոնք ձեռք ձեռքի տուած, շարան-շարան նետւում էին Եփրատի ալիքները՝ իրենց սեփական մահով մեռնելու համար և ոչ այն մահով, որ պատրաստում էր անողորմ, տմարդի թշնամին։ Այդ նահատակութեան համար ևս Շիլլերի „Տէլ"-ը տալիս է մի սրտաշարժ նմանութիւն։ Այնտեղ խօսում է շվէյցարական գիւղացի Շտաուֆախէրը իր ամուսնու՝ քաջ ու խելացի Գերտրուդի հետ, որը յորդորում է նրան դէպի դիմադրութիւն, ապստամբութիւն։ Շտաուֆախեր տատանւում է—սիրում է նա իր ամուսնուն։ Նա ասում է. „մենք տղա-

unerschrocken: « Der letzte Weg steht auch dem Schwächsten offen! Ein Sprung von dieser Brücke macht mich frei! » Hier die Schweiz von 1308, dort das Armenien von heute, und doch *ein* Schicksal! *ein* Empfinden! *ein* Handeln! Und mitten in allem Schmerz um soviel edles, vernichtetes Leben, um soviel stolzes, vergossenes Blut ist mir der tröstende Gedanke, die sichere Hoffnung aufgeblitzt, dass das Schicksal der armenischen Nation kein verzweifeltes ist, dass man nicht an dem Schicksal einer Nation verzweifeln darf, die solche Gestalten hervorzubringen vermag!

Nur Waffen! Waffen in die Hand jedes Armeniers, ob Mann, ob Weib, und wie eine lodernde Flamme wird diese lange eingepresste Volkskraft gen Himmel schlagen und mit elementarer Wucht ihre Peiniger und Dränger zerschmettern und vernichten!

Geben Sie, hochverehrte Herren, Ihrem Volke das Bewusstsein seiner Kraft, seiner Ueberlegenheit, und wie die Schweizer Bauern die übermächtigen, glänzend bewaffneten östreichischen Ritter schlugen als sie sich endlich, der Unterdrückung satt, alle auf einmal erhoben, so werden sich auch die Armenier erheben und nicht wieder ruhen bis sie Herren geworden sind im eigenen Lande und bis es auch von ihren Bergen zu Tal klingt wie im Tell:

« Frei sind die Hütten, wo die Unschuld wohnt! »

Diese Ueberzeugung unter dem armenischen Volke zu verbreiten — die Hoffnung auf einen siegreichen Endkampf zu verbreiten — das scheint mir fast wichtiger für Armenien, als eine europäische Intervention.

Die zurückgebliebenen oder nicht entwicklungsfähigen Rassen müssen schliesslich im Daseinskampf erliegen, und die Türken und Kurden sind nach Naturanlage und Religion zurückgebliebene, nicht entwicklungsfähige Rassen.

Die Armenier aber sind das Volk, dem kraft seiner ausgezeichneten geistigen Veranlagung, und kraft seiner durch Jahrtausende bewährten Zähigkeit die Zukunft in Vorderasien gehört.

So wird es geschehen! So muss es geschehen! Wenn die Türken die Kanonen haben, so haben die Armenier die Gehirne, und die Geschichte wird doch nicht mit Kanonen, sondern mit Gehirnen gemach? Da wird jeder Stein zur Waffe, wenn ein Volk aufsteht, um seine Unterdrücker zu vernichten.

Schon grollt es in der Tiefe, schon haben Blitze gezuckt: das sind die Taten der armenischen Helden und Märtyrer, Männer und Frauen! Wer weiss wie bald der Wettersturm losbricht! Möge er keinen Armenier ungerüstet finden!

In tiefer Anteilnahme grüsst Sie

Ilse Frapan.

մարդիկս կարող ենք մեռնել արիաբար կռուելով. ի՞նչ կը լինի, սակայն, ձեր ճակատագիրը»: Եւ Գերտրուդ աներկիւղ պատասխանում է նրան. „ամենաթոյլ էակի առջև բաց է մնում վերջին ճանապարհը. մի թռիչք այս կամուրջի բարձրութիւնից կազատէ ինձ»: Այստեղ՝ Շվեյցարիան 1808-ին, այնտեղ՝ Հայաստանը մեր ժամանակների և սակայն մէկ է ճակատագիրը, մէկ է զգալու և գործելու եղանակը:

Եւ մինչ իմ սիրտը կսկծում է այդքան ազնիւ, ոչնչացրած կեանքերի, այդքան հպարտ, թափած արիւնի դիմաց՝ մի սփոփիչ միտք է փայլատակում իմ գլխում, հաստատուն մի յոյս՝ որ հայ ազգի վիճակը յուսահատական չէ, որ անկարելի է յուսահատել մի ազգի ճակատագրից, որը ընդունակ է արտադրել այդպիսի դէմքեր:

Միայն զէ՞նք: Զէ՞նք տուէք իւրաքանչիւր մի հայի ձեռքը, լինի նա տղամարդ, թէ կին, և երկար ժամանակ կաշկանդուած ժողովրդային ուժը բոցավառուող կրակի պէս մինչև երկինք կը զարնէ ու տարերային ծանրութեամբ ջարդ ու փշուր կ՚անէ իր դահիճներին, հարբստահարիչներին: Տուէք, մեծարգոյ պարոններ, ձեր ժողովրդին իր ուժի և բարձրութեան գիտակցութիւնը և, ինչպէս որ շվեյցարական գիւղացիները՝ խոնջած հարբստահարութիւնից՝ բոլորը մէկտեղ ոտքի կանգնեցին և ջարդ տուին թուով իրենցից գերակշռող և փառայեղօրէն սպառազինուած աւստրիական ասպետազօրքերին, այնպէս և հայերը պիտի ապստամբին և երբէք այլևս չպիտի հանգստանան, մինչև որ տէր չդառնան իրենց սեփական երկրին, մինչև որ այնտեղ ևս լեռից-ձոր չհնչէ, ինչպէս „Վիլհէլմ Տէլ»-ի մէջ՝

„Ազա՛տ են խրճիթները, ուր անմեղութիւնն է բնակւում»:

Այդ համոզումը տարածել հայ ժողովրդի մէջ, ներշնչել նրան վերջին յաղթական կռուի յոյսը—դա ինձ համարեա աւելի ծանրակշիռ է թւում, քան եւրոպական միջամտութիւնը:

Յետամնաց կամ զարգացման անընդունակ ցեղերը պէտք է վերջի վերջոյ ընկնեն գոյութեան կռուի մէջ. իսկ թիւրքերն ու քրդերը իրենց բնատուր հակումներով ու կրօնով յետամնաց ցեղեր են, անընդունակ զարգացման: Այնինչ՝ հայերը իրենց սքանչելի մտաւոր յատկութիւններով և հազարաւոր տարիների ընթացքում հաստատած ճկունութեամբ՝ մի ժողովուրդ են, որին պատկանում է ապագան Փոքր Ասիայում:

Այդպէս լինելու է: Այդպէս պէտք է լինի: Եթէ տաճիկները թնդանօթներ ունեն, հայերը ունեն ուղեղներ. իսկ պատմութիւնը կազմում են ոչ թէ թնդանօթներով, այլ ուղեղներով: Իւրաքանչիւր մի քար զէնք է դառնում, հէնց որ մի ժողովուրդ ապստամբում է իր հարստահարիչներին ոչնչացնելու համար:

Արդէն որոտում է խորութիւնների մէջ, արդէն փայլատակել են կայծակնաշանթեր. հայ հերոսների ու նահատակների գործերն են դրանք — տղամարդկանց և կանանց: Ո՞վ գիտէ, երբ կը պայթի մեծ փոթորիկը... Թող նա ոչ մի հայի անզէն չգտնի:

Խորին կարեկցութեամբ ողջունում է ձեզ

ԻԼԶԷ ՖՐԱՊԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊՕՆՏՈՍԷՆ

Պոնտոս 15/28 Հոկտ. 1901

Ճանիկը, որ երբեմն Մինասեան հռչակաւոր հրոսա-սախումբին ազատ ասպարէզն էր եղած իր խիտ անտառներով և անմատչելի, ժայռոտ լեռներով՝ այժմ իր բոլոր հայ գիւղերովը ենթակայ է կառավարութեան անգութ պաշտօնեաներու կեղեքումներուն. ի՞նչ տխուր հակապատկեր։ 95-96 թուականների ընդհանուր կոտորածի ժամանակ, երբ ամբողջ Հայաստանը արիւնով կը ներկուէր և մուխ-ծուխի մէջ կը մրկէր, ասդին, Գուրշունլուի ժայռերուն յեցած այս քաջարի խումբը տեղական իշխանութեան սարսափ կ'ազդէր, որով գոնէ Ճանիկը ազատ մնաց ընդհանուր աւերումէն։

Պոնտոսի բոլոր հայ ժողովուրդը տխրութեամբ կը յիշէ և գիտէ այս խումբին անձնատուր ըլլալուն տխուր պարագաները։ Սամսոնի մի քանի վատ հարուստներու կեղտոտ ընթացքը, ահ ու դողի մատնելով ընդհանուր հայ ժողովուրդը, կը ջանար նաև անհետացնել Մինասեան խումբը, ինչ որ կառավարութեան փափագն էր արդէն և զոր գիւրացուցին վատոգի, միթէսարիֆի մուավին Կարապետ էֆէնտին և մուխթարը, որոնք ձեռք ձեռքի տուած վերջապէս յաջողեցան այս խումբի մօտ մասնաւոր մարդիկներ ուղարկելով՝ համոզել որ եթէ անձնատուր ըլլան պիտի ների իրենց։ Խումբը՝ երկար, շատ երկար վարանումներէ վերջ, տեսնելով որ ժողովուրդը զիրենք մինակ թողուցած և հայ գիւղացին այլևս կը զլանայ ապաստան տալ, մանաւանդ որ իրենց ընկերներէն ոմանք պակսած էին, ստիպուած անձնատուր եղաւ կառավարութեան, որով հանդարտեցան վատասիրտ հայ հարուստներու և երկչոտ թիւրք պաշտօնեաներու խռովեալ մտքերը։ Ահա այսպէս, չորս հինգ տարուան անընդհատ կռիւներէ վերջ, այս հայդուկային խումբը սև վարագոյրով մը կը գոցէր իր շրջանը դրոշմելով յաւիտենական ամօթոյ կնիքը տեղացի հայ ժողովրդի ճակատին...

Կառավարութիւնը, մանաւանդ Սամսոնի միթէսարիֆը իրենց փափագին հասած էին. այլևս անհետացած էր շահատակ ոստիկաններու լրբութիւններուն պատասխանող ուժը։ Իսկ տեղական հայ ժողովուրդը, որ առերևոյթս հանդարտութիւն մը վայելելու միամտութիւնը կ'ունենար՝ անմիջական դառն պատրանք մը կրեց. կառավարութեան հայը ոչնչացնելու համար եղած թաքուն ծրագիրը յայտնի է. նա չի գոհացաւ լոկ Մինասեան խումբը ցրուելով, մտադրած էր նաև առիւծներու որջը քայքայել, որպէս զի երկրորդ անգամ մը, թերևս աւելի զօրաւորները բոյն չդնեն հոն, և այս տարի սկսաւ նա իր աւերիչ դերը։

Խնդիրը տնտեսական կողմէն կը սկսի և տուրքի հաւաքման առթիւ երևան կուգան տաճիկ կառավարութեան թաքուն մտադրութիւնները։ Դատարանական զեղծումները մէկ դի, որոնք օրը օրին իրար կը յաջորդեն, զերար գերազանցելով։ Արդէն յայտնի են, քանի տարիներէ ի վեր, տուրքի հաւաքման առթիւ կառավարութեան ամէն տեղ ի գործ դրած ծայրայեղ խստութիւնները, անլուր խժդժութիւնները, որուն այլևս համբերել, տոկալ անկարելի դարձած էր. բայց այս տարի նա անօրինակ կերպով սկսաւ իր անգթութիւնները։ Հունձքերը հազիւ խոստմնալից երևոյթ մը ցոյց տուած էին և հայ շինականը մեծ գոհունակութեամբ կը դիտէր իր արդիւնալից արտերը, բայց շուտ յուսախաբ եղաւ։

Տակաւին արտերը կանաչ, հասան հարկահաւաք ոստիկանները, ցրուեցան խումբ խումբ բոլոր հայ գիւղերը, հաւաքելու 15-18 տարուան յետնեալ տուրքերը — եթէ իրապէս գոյութիւն ունին, ինչ որ դժուար է հաւատալ — բայց այս անգամ՝ պաշտօնեաները ուղղակի Կարինէն եկած են, գանձելու համար վիլայէթական տուրքի մեծագումար „հէվալէ“ մը, որոշմամբ Տրապիզոնի կուսակալին։ Ոստիկան հաւաքիչներու ներկայութիւնը արդէն բաւական էր ահ ու սարսափ ձգելու հայ գիւղացիներուն մէջ։ Գափուլ-Գայա, Գուրշունլու, իր շրջակայ բոլոր գիւղերովը ենթարկուեցան սոսկալի աւարառութեան. պաշտօնապէս և բացարձակ լրբութեամբ կատարեցին կողոպուտը։ Դեռ կալերը չսկսած սկսեցին ծախել խեղճ գիւղացիին բոլոր ունեցածը, եզը, կովը, գոմէշը, ձին և էլն քշեցին Զարշամպայ, իրական արժէքին կէս գնով և աւելի պակաս հրապարակաւ ծախելով գանձեցին. գիւղացիների բողոքը, աղերսը, պաղատանքը անլսելի մնաց։ Կարգը եկաւ բերքին. կալերը սկսած են, շատեր զգուշելով իրենց եզներէն, իրենց կռնակներովը փոխադրած են արտի բերքերը. ցորենով, եգիպտացորենով, գարիով, վարսակով լիքն են կալերը. տենդոտ աշխատութիւն մըն է որ կը սկսի ամէն գիւղի մէջ. կ'ուզեն անյագ պաշտօնեաներու քսակները շուտ լեցնելով հեռացնել։ բայց իրենց ամբողջ բերքը անբաւական է գոցելու գեղին այսքան տարուան յետնեալ պարտքերը. իրենց ամբողջ ունեցածը, սերմնացուն, ձմրան պաշար՝ բոլորովին կը գրաւուին ու կը ծախուին շատ պակաս գիներով, թողլով ամբողջ Զարշամպայի հայ գիւղերը անօթի, մերկ և յետին աստիճանի թշուառ։

Աներևակայելի են հարկահաններու սրիկայութիւնները. ամէն գիւղ կը պարզուին սրտաճմլիկ տեսարաններ, ծեծ, բանտարկութիւն. „խնդրելով, կեավուրլար փարա“ կը գոչեն վայրագ գազանները։ Ի՞նչ լինէ խեղճ գիւղացին, որո՞ւ դիմէ. յուսահատ, արտասուելով կը խնդրէ մնացեալը յաջորդ տարին վճարելու, բայց միշտ միևնոյն խռպոտ ձայնը՝ „փարա“ ճարահատ, քանի մը գիւղերէն պատգամաւորութիւն մը՝ քահանայ մը և քանի մը գիւղացիներ կը վազեն Զարշամպայ, Սամսոն, կը դիմեն տեղական կառավարութեան, խնդրելով դարման մը այս անտանելի կացութեան, կը դիմեն առաջնորդարան, հայ հարուստներու, միջամտութիւն մը յաջողցնելու համար, բայց անօգուտ. ոչ մէկ կողմէն գթութեան ու արդարատանքի ակնարկ մը կ'ուղղի իրենց. շաբաթներով հոս ու հոն զարնուելէ, դեգերելէ վերջ, դառն յուսահատութեան մը մատնուած, կը վերադառնան իրենց գիւղերը։ Բայց ի՞նչ պատասխանել ոստիկաններուն, որոնք դեռ գիւղը նստած՝ անընդհատ կը շարունակեն իրենց աւերումները. ասոնց՝ առանց միջամտութիւն մը կարենալ յաջողցնելու վերադարձը՝ աւելի կը քաջալերէ չարագործները, որոնք այս անգամ աւելի լիբ հայհոյանքներով, անարգանքներով կը հարչեկեն բոլոր գիւղացիները, փող կ'ուզեն, խօսք չեն հասկնար։ Կացութիւնը անտանելի է։ Ոմանք քաղաք կը փութան անխիղճ վաշխառուներէ 25-30-40 տոկոսով դրամ գտնելու. ոմանք ալ բերքը յաջորդ տարին յանձնելու պայմանով, դեռ չը ցանուած բերքը կը վաճառեն, հարկ է ըսել որ

իր բուն արժողութեան կէս գինէն ալ պակասով, որպէս զի շուտ ազատին վայրագ գաղաններու ճիրաններէն, բայց կան դեռ շատեր, որոնք ոևէ միջոցով մը չեն կարողացած դրամ հայթայթել, այդպիսիներուն ալ երբէք չեն խղճար տուններնին քանդելու, փլցնելու, գերանները ծախելու համար։

Ահա ճանիկի ներկայ կացութիւնը։ Ամբողջ հայ ազգաբնակութիւնը սարսափահար, ցնորուած ապշութեամբ կը դիտէ իրերու տխուր յաջորդութիւնները, որուն այլևս կարծես ստրկօրէն ընտելացած, ապուշ անտարբերութիւն մը կը ցուցնէ, բայց շատ չանցնիր, տնտեսական այս ծայրայեղ ճնշումը յառաջ պիտի բերէ սոսկալի պայթում մը, ոևէ ժամանակէ մը աւելի բուռն ու սաստիկ։

Քաղաքներու կացութիւնն ալ հետզհետէ աւելի կը ծանրանայ, տուրքի հաւաքման առթիւ կատարուած ծայրայեղ խստութիւններով և անխիղճ բռնաբարումներով։ Ստոյգ աղբիւրներէ կը տեղեկանանք թէ՝ ամբողջ Սեբաստիոյ և Գաղատիոյ կուսակալութիւններուն մէջ այս օրինակ ծայրայեղ խժդժութիւններ և աւերումներ գործուած են. տուրքի համար բանտարկութիւնները այլևս ամէնէն հասարակ իրողութիւններ են, չարժէր նշանակել։ Կառավարութիւնը միշտ անմիջական միջոցներու կը դիմէ տուրքը գանձելու. անկարողներու և կամ բացականերու տունները կը դիմեն, տան բոլոր կարասիներուն, ամէնէն անհրաժեշտն անգամ՝ կը գրաւեն ու շատ պակաս գիներով կը ծախեն. կը պատմի, թէ այս պահուս շատերու ձմռան պաշարներն իսկ կը յափշտակեն, բացարձակ թշուառութեան մատնելով հանուր ժողովուրդը։ Նպատակը բացորոշ է. նիւթապէս և բարոյապէս ոչնչացնել հայը ամբողջ Թիւրքիոյ մէջ։

Ժողովուրդը յուսահատ՝ օրհասական ճիգեր կը թափէ այս աւերող հոսանքին առաջ, բայց երբէք կարող չէ ձայն բարձրացնելու։ Սասունի վերջին կոտորածը անոր ջիղերը դրգռած է. շատ կը վախնայ, մանաւանդ որ ամէն կողմէն ալ կասկածելի տարաձայնութիւններ կը լսէ։ Զարդի և կողոպուտի լուրերը կը գրգռեն Թիւրք ժողովուրդի անյագ ախորժակը. կազմ ու պատրաստ՝ նա յարձակելու նշանին կրսպասէ արդէն. հորիզոնին վրայ վաղահաս փոթորկի նշաններ կերևին. . .

Ընդհանուր ջարդի լուրեր անպակաս են. անցեալ շաբաթ ստուգուեցաւ Տրապիզոնի մէջ պատրաստուած ջարդի ծրագիրը, զոր վալին շատ դժուարաւ յաջողած է արգելել։ Նոյնը պատահած է նաև Կիրասոն։

* * *

Մի քանի շաբաթներ առաջ Թուսիայէն 15-20 հայեր, պարզ, հասարակ մարդիկ, մակոյկով մը յաջողած են Տրապիզոնի կողմերը ցամաք ելնել, իրենց հայրենիքները վերադառնալու համար. ասոնց մեծ մասը կրցած է անվտանգ անցնիլ, իսկ հինգը, որոնք իրենց ընկերներէն ետ մնացած էին, անակնկալ վտանգի մը կ'ենթարկուին։ Մօտաւոր գիւղերէն մի քանի լազեր, իբր թէ դիպուածով պատահած ըլլան, կասկածելով դրամ կը պահանջեն որ ազատ թողուն։ Խեղճերը օձիքնին շուտ մը ազատելու համար, կը յօժարին քանի մը ոսկի տալ, բայց լազերը կը պահանջեն նաև հրազէններն. այս բիրտ պահանջումին արժանի պատասխանը կը տրուի անմիջապէս ռէվոլվէրի հարուածով, որ գետին կը տապալէ լազերէն մին, որուն կը հետևի սոսկալի կռիւ մը։ Երկու կողմէն մի քանիներ կը սպաննուին, հայերէն երկուքը կ'ընկնին, երկուքը ձերբակալելով Տրապիզոն կը տարուին. իսկ մին բոլորովին անյայտ է։ Վալին այս խնդիրը տեղեկանալով, քննութիւն կը բանայ. երբ կ'իմանայ թէ մակուկավարները յաճախ այս կերպ փախուստներ դիւրացուցած են, ինչպէս այս անգամ, կը բանտարկէ բոլոր ռէյիս գաբտանները և սոսկալի կերպով կը գանակոծէ (ասիկայ վալիին մասնաւոր սովորութիւնն էր եղեր և միշտ շատ մը յանցաւորները ծեծելով միայն կը գոհանայ եղեր)։ Կը հաստատի թէ անկարևոր հասարակ մարդիկ եղած ըլլան, որոնք երկար պանդխտութենէ մը վերջ ուզելով վերադառնալ իրենց հայրենիքը և ներս մտնելու համար, նաւահանգիստները եղած սոսկալի խստութենէն վախնալով, ձեռնարկած են մասնաւոր մակոյկով, գաղտնապէս մտնել։

ՆԱՄԱԿ ԲԷՅՐՈՒԹԷՆ

1 Նոյեմբեր 1901

Հոս 10 օրէ ի վեր ամէն որ 4-5 մարդ կը պակսի Թիւրքերու կողմէն։ Խաղաղութիւնը բոլորովին վրդովուած է։ Կատարեալ անիշխանութիւն կը տիրէ քաղաքին մէջ Տեղւոյս Թիւրք կառավարութիւնը երբէք չի միջամտեր։ Բոլոր քրիստոնեաները տուներնին քաշուած դուրս չեն ելներ իրենց վախէն։ Թիւրքերը բոլորովին զինուած են ցերեկն իսկ. իրենց պզտիկ բառ մը խօսող քրիստոնեաները հրապարակի վրայ կը զարնեն ա ւանց վախի։ Ամէն օր, գիշեր ցերեկ պահապան զօրքերը կը դառնան քաղաքին մէջ և երբ դէպքի մը հանդիպին՝ իրենք հեռուէն հանդիսատես կը լինին եթէ հարուածողը Թիւրք է. իսկ եթէ զարնողը քրիստոնեայ է, անմիջապէս ձերբակալելով բանտ կ'առաջնորդեն և բանտին մէջ ամենաանգութ չարչարանքներու կ'ենթարկեն զայն։ Ասկից ամիս մը առաջ կառավարութիւնը Թիւրք բանտարկեալները գերգրեռելով, զանոնք կը զինէ և արձկել կուտայ քրիստոնեայ բանտարկեալներու գ օ ղ ու շ ն ե ր ու ն վրայ (վասն զի բանտին մէջ Թիւրք և քրիստոնեայ բանտարկեալներուն յատուկ մասնաւոր գօղուշներ կան), որոնք կ'ըսկսին իրենց առջևը հանդիպող քրիստոնեաներ զարնել։ 5-6 քրիստոնեայ կրսպանուին և մաս մ'ալ կը վիրաւորուին։ Թիւրքերուն կողմէն երբէք վնասող մը չէ եղած, վասն զի քրիստոնեայ բանտարկեալները առանց պզտիկ մի զէնքի, չեն կրցած բան մը ընել։ Կառավարութիւնը յարձակող կամ զարնող Թիւրք բանտարկեալները երբէք չէ պատժած, քանի որ ինքն է թելադրողը, գրգռողը և զէնք յանձնողը։ Մեռնողները և վիրաւորուածներէն մի քանին, որ յետոյ մեռան՝ Թաղուեցան գացին անշուք, աննշան։

Վերոյիշեալ դէպքէն 4 օր յետոյ մէկ պահականաւ և Թօրբիտо մը եկաւ փայտէ շինուած, իբր քաղքի պահպանութեանը համար։ Պէյրութի վիճակը շատ աննախանձելի և վատ է։ Ամէն օր հաճոյքի համար 4-5 մարդեր կը զարնուին։ Կ'ըսուի թէ կառավարութիւնը մտադիր է բոլոր հայերը Պէյրութէն արտաքսել նախ խուզարկելով անոնց բոլոր տուները և բնակարանները, այն միակ պատճառով թէ Կ. Պոլսէն հրաման եկած է եղեր որ վերջերս Բէյրութ յեղափոխականներ մտած ըլլալով անմիջապէս ձերբակալեն և ուշադրութիւն ընեն որ

կասկածելի մարդիկ չմտնեն երկիր։ Կեդրոնին այդ հրամանը մեկնուած է հայերը արտաքսել, ներկայիս մէջ մտնող ելնող հայերէն կրկնակի երաշխաւորութիւն կ'առնեն մէյ մէկ մէճիտ ևս առնելով։

Կը լսուի թէ Թիւրք կառավարութիւնը Ֆրանքո-Թիւրք վէճի առթիւ, ամէն կողմ հրաման զրկած է որ Բէյրութի Ֆրանսական վարժարանի հայ ուսանողներուն անցագիր չտրուի Բէյրութ վերադառնալու և ասոր հետևանօք անոնցմէ մի քանիները չեն կրցած Բէյրութ գալ իրենց ուսումը շարունակել։

31 դեկտեմբեր

Թիւրք զինուորներ, որոնք իրենց ծառայութիւնը լրացուցած են՝ օսմանեան Սաատէթ շոգենաւով Եէմենէն իրենց հայրենիքները կը վերադառնային։ Կ'երևայ թէ ածուխը հատնելով՝ շոգենաւը կըստիպի 15 օր Սուէզ սպասել, սակայն այդ բաւ չհամարելով՝ Բէյրութ հասնելուն 10 օր ալ հոս քարանթինայի բռնեցին։ Խեղճ զինուորները, որոնք Փոքր-Ասիայի զանազան կողմերէն են, ամբողջ 5-6 տարի Արաբիայի կիզիչ կլիմային տակ մնալով թշուառ ու անօթի՝ մարդկային կերպարանքէ բոլորովին ելած են։ Տարիներով անվճար մնացած իրենց ամսականներուն փոխարէն ձեռքերնին վճարագիր մը տուած են Բէյրութի վրայ. սակայն հոս ալ փարա մը չեն վճարեր իրենց՝ առարկելով թէ դրամ չկայ։

Թուէս երկու օր առաջ, կէսօրէն ետքը, տեղիս կուսակալ Բէշիտ պէյ նաւահանգստի պաշտօնատունը (լիման տայիրէսի) եկած էր։ Սաատէթի զինուորները՝ մօտ 100 հոգի՝ կուսակալի մեկնելու պահուն կառքին վրայ յարձակելով ձիերուն սանձը կը բռնեն և դրամ կը պահանջեն։ Փոխանակ քաղցրութեամբ այս անօթի խեղճերը ճամբայ դնելու՝ կուսակալի թիկնապահներէն Մահմուտ և Էմին էֆէնտիները մտրակով վրանին կը յարձակին և կըսկսին աջ ու ձախ հարուածել։ Ասոր վրայ զինուորները կատղելով թիկնապահները ձիերէն վար կ'առնեն և լաւ մը ոտնակոխ կ'ընեն. վրայ հասնող քաղաքային և զինուորական (գանօն) ոստիկաններն ալ փառաւոր ծեծ մը ուտելէ ետքը զէնքերնին ալ կը թողնեն ու կը փախչին։ Սակայն այս իրարանցումէն օգտուելով կուսակալը կը յաջողի կառքը քառասմբակ քշել տալով փախչիլ։ Երբ ժամը 4½-ի մօտերը փողոց ելած էի՝ ականատես եղայ այս կատակերգութեան վերջին արարածին։ Զինուորները կուսակալին կառքը կը հետապնդէին քարեր նետելով և սարսափելի հայհոյելից աղաղակներով. իսկ ահաբեկած ոստիկանները՝ զէնքերնին ու գլխարկին թողած՝ ոտքերնուն զօր կուտային ապաւինելու ծակ մը փնտռելով։ Այս ժխորին մէջէն կը լսէր ոստիկան ալբանիացի Ալի պէյի ձայնը, որ կուսակալին ետևէն կը պոռար. „ո՞ւր կը ձգես կը փախչիս Վալի պէյ, ո՞ւր" բայց մտիկ ընողն ո՞վ։ Իսկ յարձակող զինուորներէն մէկը կը պոռար. „էսրս եղբայր էինք, երեքը Եէմէն մեռան, դիս ալ հո՞ս անօթութենէ պիտի սպաննէք"։

Կուսակալը սակայն լուռ ու մունջ կուլ տաւ այս խայտառակութիւնը, զինուորները՝ ոչ մէկ պատիժ չկրելէ զատ, իրենց նպատակին ալ հասան. երեկ քիչ մը ստակ տրուած է իրենց։

Կ'երևայ թէ հարստահարած թիւրքերն ալ պիտի սորվին իրենց իրաւունքներուն գիտակցութիւնը ունենալ, գէթ... ստամոքսի իրաւունքին։

ՆԱՄԱԿ ՊԻԹԼԻՋԷՆ

Ալբգան աշիրէթին աղա Օսմանին և Բէնճինար աշիրէթին աղա երկու եղբարց՝ Պըշար և ճէմիլի միջև տեղի ունեցած յարատև ընդհարումներն մեծ աւերումներ կը գործեն։ Այս առթիւ շատ մը գիւղեր կը կողոպտուին ու կ'ամայանան։

ճէմիլ աղան իր հրոսախմբերու պիտոյից հոգացման համար դրամական մեծ գումարներու կարօտ ըլլալով՝ սկսած է Ղարզանի Եէզիտ քրիստոնէաբնակ գիւղերուն վրայ ծանր տուրքեր բեռնաւորել, իբր թէ անկուշտ կառավարութեան տուրքերն չէին բաւեր։ Այսպէս, ներկայ ամսոյս 27-ին Ուասըտ եէզիտաբնակ գիւղէն (70 տնւոր) 11 ոսկի առաւ։ Կըրէ-Զալօ գիւղէն 20 մէճիտ։ Նոյն բռնաւոր ճէմիլ աղան, Ռնտուան գիւղի տարբեր հասարակութեան պետերէն՝ հայազգի Օհան Մուրատեանէն 10 ոսկի, ասորի Իտոյէ Մանտոյէն 6 ոսկի, բողոքական Ղարիպոյէն 6 ոսկի և եէզիտի Միրզայէ Պընավշէն 8 ոսկի կը պահանջէ սաստիկ ճնշումի և սպառնալեաց ներքև. Գանձումը միշտ անտարակուսելի։

Օգոստոսի վերջերը Գուպանէ գիւղը (15 տնւոր, Սղերդէն 11-12 ժամ հեռի) կը կողոպտուի իր շրջաբնակ թիւրք ֆագիներու՝ կրօնական ընթերցումով պարապողներու կողմանէ։ Օգոստ. 23-ին Տէն գիւղէն 3 ժամ հեռու Թարազը կոչուած մարգագետնին մէջ բնիկ տէհեցի Սահակ Մարտիրոսեան անուն հայն հրացանի գնդակ մը կ'ընդունի և երեք օրէն յետոյ կը մեռնի. ոճրագործներն են Էրս գիւղացի Սուֆիէ Տուժոյին տղան՝ Մըհէ և ուրիշ երկու ընկերներ։

Օգոստոս 30-ին, գիշեր ատեն, Բաս թաղեցի երեք երիտասարդներ՝ Իսմայիլ պէնի Գասըմ, Մալէ պէնի Մուսու և Մէհմէդ պէնի Իսմայիլ, զինեալ՝ Սղերդի հայոց թաղը կոխելով՝ յաջորդաբար ասորի Կորկիս քահանային, հայազգի Պէտրոս Թէրճէմանեանի և Ամսէ Ամսէեանի տները կը յարձակին և սպառնալեօք ու ծեծելով դրամ կը պահանջեն, բայց տանուտէրներու ողբ ու աղաղակին վրայ դրացիները կը հաւաքուին, բռնաւորք նկատելով, որ ալ իրենց շանքն ապարդիւն մնալու կը դատապարտուի, կը թողուն կերթան խեղճերուն մահուան սպառնալիք կարդալով։

Օգոստ. 31-ին գիշերը թիւրք գողեր կը մտնեն Յովհաննէս Զարազմանին տունը և կը տանին հազար պէլայով պատրաստած նոփնոր երեք ձեռք անկողինները 1,000 ղրշ. արժողութեամբ։ Տէրը չափազանց աղքատ է և 1895-ի դէպքերէն իվեր իր ընտանեօք բաց պառկելով մինչև հիմա հազիւ հազ յաջողած էր իր զաւակաց անկողիններ շտկելու։

Սեպտ. 12. Սղերդի մէջ օրէնք է որ թէ տներն և թէ խանութները մեր Խաչվիրացի տօնին կը վարձուին։ Վարձու խանութներն առհասարակ թիւրքերու և մամաւանդ մզկիթներու սեպհականութիւնն են։ Այս տարի վարձակալութեան գործը շաբաթ մը կանխեցին (նշանակելի իրողութիւն մ'է, որ Սղերդի թիւրքերու բոլոր նշանաւոր տօները, մեր տօներու հետ սերտ առնչութիւն ունին, մեր մեծ պահքն ու Յարութեան զատկէն կը հաշվին ու կը սարքուին իրենց տօները), մի քանի թիւրք ըմբոստ և անկուտի էշգիա երիտասարդներ (Ապտէ, Աթօ, Ապաս և Ահմէդ) քրիստոնեաներու բոլոր խանութները ճնշումով, կամաւելի ճիշդը վագֆ նա-

զբրիին թելագրութեան վրայ (որովհետև վագքն ալ բաւական շահ կունենայ, խանութներու վրայ իրենց ըրած արտակարգ յաւելումներով) իրենք վարձեցին և կրկնապատիկ շահով ու բռնի ուժով 4 ոսկիի խանութը 6 ոսկիի վարձով տուին քրիստոնէից։ Հացակարօտ ժողովուրդը մեծ վնասներ քաշեց և անտարակոյս յետ այսու ամէն տարի ալ պիտի քաշէ այս վարձքին երեսէն։ Ի՞նչ ընէ, լուծն յակամայս տանիլ ստիպուած է։ Ի սէր Աստուծոյ, կեղեքումներուն ո՞րը թուենք ո՞րը թողունք, անթիւ, անհամար, անվերջանելի են անոնք և եթէ ամէնքը գրի առնելու ըլլանք, Սև ծովը պէտք էր որ մելան դառնար, որ մեզի բաւեցնէր. այսքան շա՞տ են։

Սղերդի առաջնորդական տեղապահը 50 ոսկիի կիր պատրաստած է. մինչև այսօր կառավարութիւնը կ՚ընդդիմանայ և կ՚արգիլէ կիրն ծեծելու գործողութեան, ըսելով թէ „թագաւորն արգիլած է հայոց եկեղեցւոյ մէջ ոևէ շինութիւն, նոյնիսկ նորոգութիւն“։

Սեպտ. 13. Այսօր արիւնահեղ կռիւ մը տեղի ունեցաւ Սղերդի մօտակայ Թ Ը Լ Լ օ գիւղի շէյխերուն միջև։ Մանրամասնութիւնք կը պակսին։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՊՐՕ ԱՐՄԷՆԻԱ“

(№№. 22, 23, 1, 2)

—

№ 22. Ֆրանսիս դը Պրեսանսէ „Դիլեմմ“ խորագրով առաջնորդողի մէջ գրում է.

„Պետերբուրգում, ինչպէս եւ Պարիզում, շատ լաւ տեղեակ են Տաճկաստանի հայ վիլայէթների ծանր վիճակին։ Վանից Մուշ գնացած ռուս հիւպատոսի առաքելութիւնը վկայում է արդէն, որ պ. ԶիմՕվիեվ երկիւղ է կրում, մի գուցէ վերսկսուին 1895-ի արիւնոտ տեսարանները։

. . . Եթէ հայկական նոր հեկատոմբներ ոչնչացնեն մնացորդները մի ժողովուրդի, որի մէջ հրահանգուած ջարդը արել է արդէն իր հունձը՝ քաղաքակիրթ կոչուած կառավարութիւնները չպիտի կարողանան հրաժարել ոճիրի կրկնութեան պատասխանատուութիւնից։

. . . Կոմս Լամսդորֆ ճակատագրապէս իշխան Լոբանովի շարունակողը չէ։ Պ. Դելկասէ շատ թէ քիչ պատիւ է վաստակել, նպաստելով կրէտական հարցի ժամանակաւոր լուծման. . . Նա արդէն նախազգուշացրած է թէ անցքերից, որոնք չափազանց բարձրաձայն են խօսում եւ թէ իր մօտ արած դիմումներից։

. . . Ժամը հնչել է վճռական քայլերի համար. . . Պէտք է, որ ոճիրները կանգ առնեն։ Պէտք, որ արիւնը դադարէ հոսելուց։ Պէտք է այդ՝ մարդկային ցեղի սիրոփանքի համար։ Եւ երկու միջոց կայ՝ վերջ դնելու այդ սկանդալին։ Մէկն այն է, որ արդէն ցոյց տուի—խելացի դիւանագիտութեան իրական ու վճռական միջամտութիւնը։ Միւս միջոցը—եւ անհնարին կը լինէր խորհուրդ չտալ նրա գործածութիւնը մի ազգի, որը կարող է ապացուցանել, որ եթէ ինքը տուել է բացառիկ մարտիրոսներ, դա նրա ակտիւ արիութեան պակասութիւնից չէ, եւ որ նա տուել է նաեւ հերոսներ — միւս միջոցը՝ յեղափոխութեան հրապարակ գալն է, որ կը կուէ բոլոր հնարաւոր զէնքերով մի անանուն բռնակալութեան դէմ։

Այն կառավարութիւնները, որոնք կը հրաժարուին առաջին ճանապարհից, կը լինեն ուղղակի պատասխանատու հայկական յուսահատութեան վերագոյն վճիռների համար“։

—

Պիէռ Քիառ իր „Կիսամսեակ“-ում պաշտպանում է հայկական խնդրի և հայ յեղափոխութեան օրինաւորութիւնը ընդդէմ մի կարգ երիտասարդ թիւրքերի և մասնաւորապէս Ահմէդ Ռիզայի։ Վերջինս, ինչպէս յայտնի է, մոլեռանդ հակառակորդ է եւրոպական միջամտութեան ինպաստ հայերի և նրա գլխաւոր պատճառաբանութիւններից մինն այն է, որ այդ միջամտութիւնը կարող է իբր թէ առաջացնել մահմեդական ֆանատիկոսութեան բռնկում և հայերի խմբովին կոտորած։ Հայերի համար այդքան „սրտացաւ“ երիտասարդ թիւրքին ուսուցանում է Քիառ բազմաթիւ փաստերով, որ „օսմանեան կայսրութեան մէջ ջարդերը հրահանգւել են միշտ իվերուստ և երբէք նրանք չեն առաջացել մահմեդական մասսայի ինքնաբուխ մի շարժումից և որ նրանք, այդ ջարդերը միշտ դադարել են կենտրօնական կառավարութեան ուղղակի սպառնալիքով“. . .

. . . Այն թիւրքերը,—ասում է Քիառ—որոնք ուզում են փրկել իրենց երկիրը, չպէտք է ընդդիմանան, այլ իրենց բոլոր ուժով պիտի նպաստեն նոյնիսկ մասնակի բէֆորմներին. . .

Քանի որ ամենաազնիւ եւ ամենաբարեմիտ օսմանցիները չեն կարող միմիայն իրենց ուժով կործանել համիդական բռնակալութիւնը՝ պէտք է ուրեմն, որ դրսից գայ փրկութիւնը“. . .

Միևնոյն համարում զետեղուած են ընդարձակ ու կարևոր թղթակցութիւններ Տաճկահայաստանից։

* * *

№ 23. Քիառ խօսելով Սասունի վերջին խժդժութիւնների և ֆրանսիական պարլամենտում արուած հարցապնդումների մասին, այսպէս է եզրափակում իր „Կիսամսեակ“-ը։

Թէպէտեւ Սասունում սուլթանի նախամտածած ջարդերը յետաձգուած են, Հայաստանի նորմալ վիճակը մնում է անտանելի։ Դանդաղ մահն է թագաւորում յանկարծակի բնաջնջման տեղ։ Չի կարելի բաւականանալ խուսափողական պատասխաններով, չի կարելի պատճառաբանել, թէ մերկացուած փաստերը աւազակութեան մէկուսացած գործողութիւններ են։ Քանի՞ դիակ է հարկաւոր, որեմն, որպէս զի մի սպանութիւն ջարդի աւելի բարձր աստիճանը կարգւի։ Ի՞նչ նոր ապացոյցների պէտք ունին արդեօք, որպէս զի համոզւին, որ հէնց Կ. Պոլսում են յղացել խողխողման ծրագիրը. . . Կ. Պոլսի, Եըլդըզի մէջ է, որ մարդասպանը պատրաստում է իր ոճիրները։ Կ. Պոլսում է, որ պէտք է զարնել եւ զարնել գլխին“։

Միևնոյն համարը պարունակում է նաև մահգոյժը „Պրօ Արմէնիայի“ աշխատակից՝ պրոֆէսօր Մառիլիէի, ապա միջազգային սոցիալիստական բիւրոյի կոչը և բազմաթիւ թղթակցութիւններ երկրից։

* * *

№ 1. Խմբագրական Դը Ռօբէրտիի *Proh pudor!* (Ամօ՞թ) վերնագրով։

Հայաստանի սուրբ դատը — այսպէս է եզրափակում Դը Ռօբէրտի — այն ժամանակ միայն ազգու կերպով կարող է փաստաբանուիլ Եւրոպայի առաջ, երբ նա վերստին կը գտնէ ամօթի կարմրութիւնը, որնա կորցրած է երեւում, երբ թարմանալով նոր սոցիալական գաղափարների ու նոր իրաւունքի ազդեցութեան տակ՝ նա նորից կըստանայ «ամօթխածութեան գոյնը»։

№ 2. Խմբագրական՝ Հայր Ալիշան։ „Կիսամսեակը“ նուիրուած է Սուրբ Առաքելոց վանքի պաշարման և Անդրանիկի խմբի քաջագործութիւններին։

Համիդի լեզուով — ասում է «Պրօ Արմէնիայի» խմբագրատեղը — հայ ֆէդայիները աւազակներ են։ Իրենց ժամանակին ռերրիական յեղափոխութեան հայդուկները

եւ յունական անկախութեան ռահվիրաները եւս որակւում էին աւազակ անունով։ Փոյթ չէ, քանի դեռ միմիայն Մարդասպանն է տալիս այդ անունը այն մարդկանց, որոնք յուսահատօրէն մարտնչում են յանուն իրենց լքւած ժողովրդի, լքւած եւրոպական կառավարութիւններից, որոնք դաշնագիրներով պարտաւորւած էին նրան պաշտպանելու։ Բայց եթէ եւրոպական ոեւէ պետութեան չէֆի կամ ոեւէ մինիստրի գլխում միտք ծագէր՝ իւրացնելու Եըլդըզի լեզուն՝ դիւրին կը լինէր ամօթխածութեան հրաւիրել նրան եւ հարցնել՝ ի՞նչ անուն արդեօք պէտք է տալ այնուհետեւ իրեն Համիդին»։

Հետեւում է „Նոր մեծ վեզիր Սայիդ փաշան“ յօդւածը՝ Ժորժ Դորիսի, ապա թղթակցութիւններ։

* * *

Վիեննայի *Politische Correspondenz*-ին հետեւեալ տեղեկութիւններն են գրում Կ. Պոլսից Մուշի Ս. Առաքելոց վանքի պաշարման և „Հայ աւազակապետ“ Անդրանիկի քաջագործութիւնների մասին.

«Առաքելոց վանքն ունի սքանչելի, մեկուսացած դիրք եւ շրջապատւած է հաստ ու բարձր պարիսպներով։ Նրա գրաւումը առանց թնդանօթաձգութեան անագին զոհողութիւն կը պահանջէր, մի բան, որից խոյս էր տալիս կառավարութիւնը։ Պաշարման գործը ղեկավարում էր գեներալ Մէհմէդ Ալի փաշա (բօսնեակ եւ չնորհալի օֆիցէր), որը վերջին անցքերի պատճառով ուղարկւած էր Մուշ՝ չորս հետեւակ գնդերից բաղկացած ջոկատով։ Պաշարման ժամանակ թիւրքերը կորցրին չորս զինւորական եւ ունեցան մի քանի վիրաւորներ։ Մի հայ քահանայ, որին թիւրքերը ղրկել էին վանքը «աւազակախմբի» հետ բանակցելու համար՝ վիրաւորւեց։ Անդրանիկի առաջադրած պայմանները, որոնք հեռագրով հաղորդւեցին Պոլիս՝ այնտեղից հրահանգ ստանալու համար՝ մերժւեցին։ Անդրանիկը պահանջում էր, իմիջի այլոց, մի ապահովագիր՝ ստորագրութեամբ Վալիի, Մէհմէդ Ալի փաշայի եւ ներկայ գտնւող անգլիական ու ռուսական հիւպատոսների՝ որով չպէտք է այլեւս դիպչէին նրան տոճկական հողի վրայ։ Այնուհետեւ Մէհմէդ Ալի փաշան զեկուցեց Պոլիս, որ զօրքերը չեն կարող այլեւս դիմանալ սաստիկ ցրտերին (մինչեւ 20 աստիճան) եւ խնդրեց նոր հրահանգներ։ Մինիստրական ժողովը գումարւեց եւ զինւորական մինիստրի միջոցով հրաման ղրկեց Մուշի հրամանատարին՝ անպայման գրաւել վանքը, եթէ անձնատուր լինելու կրկին պահանջին մերժում ստանայ։ Իսկ Անդրանիկը այդ միջոցում իր քանուհինգ ընկերներով կարողացաւ գիշերով ճեղքել զօրքերի շղթան եւ փախուստ տալ»։

* * *

Aurore-ի յունւար 17 համարում զետեղւած է Ֆրանսիս դը Պրէսսանսէի խմբագրականը „Հերոսներ“ վերնագրով, որ մի անկեղծ ու ոգեւորւած ջատագովումն է Ադրիանուպօլսի նահատակների։

„Լաւ է—ասում է ազնիւ և անզուգական հրապարախօսը — երբեմն նոր կորով առնել դիտելով հերոսական գործողութիւնները և մարդկանց, որոնք իրենց կեանքն են տալիս իրենց գաղափարների համար։ Աբդիւլ Համիդի զոհ՝ ժողովուրդների մարտիրոսագրութեանը աւելացան չորս զոհեր եւս։ Երեքշաբթի, 10 դեկտեմբեր 1901 կախաղան հանւեցին Ադրիանուպօլսի չորս հրապարակների վրայ չորս յեղափոխականներ (հետեւում են անունները)։

„Միմիայն խառնուրդը այդ երեք ազգութիւնների ինքն ըստինքեան արդէն ուշագրաւ մի իրողութիւն է։ Եըլդըզի բանտարկեալի բռնապետութեան տակ հեծող ժողովուրդները կը միանան՝ տապալելու համար Աստուծոյ Ստուերը. . .“

Ապա „Պրօ Արմէնիայից“ քաղելով դէպքի սրտառուչ նկարագրութիւնը՝ Պրէսսանսէն շարունակում է.

„Լաւ է՝ յիշեցնել այդ փաստերը նրանց, որոնք արդար զայրոյթով ըմբոստանում են այսպէս կոչւած հայկական թուլամորթութեան դէմ։ Ադրիանուպօլսում կախւածները մեռել են իրենց պարտքը կատարող մարդկանց հանդարտութեամբ։

„Դա մի նոր ողջակէզ է՝ մատուցւած եւրոպական քաղաքականութեան ատրուշանի վրայ։ Մինչև ե՞րբ արդեօք գիւանագիտութիւնը անկարեկիր պիտի գտնւի Աբդիւլ Համիդի ոճիրների դիմաց։

„Մեծ գաղափարների համար զոհւած այդ պարզ նահատակների հանդէպ՝ դուք զգում էք գիւանատներում փակւած մեր քաղաքագէտների բոլոր անբուժելի նանրութիւնը։

„Հասկանում էք միևնոյն ժամանակ, որ բացի նրանց տնօրէնութեան տակ գտնւող ուժերից՝ կան ուրիշ ուժեր եւս, և որ վաղ թէ ուշ ժողովուրդները, որոնք արտադրում են այդպիսի հերոսներ և որոնք չեն խոնջում իրենց իրաւունքները պահանջելուց՝ վերջ իվերջոյ պիտի յաղթանակել տան իրենց օրինաւոր տենչանքները։

Ճշմարիտն ասած, միակ խնդիրը նրանում է՝ արդեօք գիւանագիտութիւնը, որ յիմարաբար խորասուզւած է ռուտինայի (աւանդամոլութեան) մէջ, պիտի կարողանայ սթափւել իր լեթարգիական քնից և ժամանակին հանգցնել ընդհարումն ու մեղմացնել փոխանցումը — թէ՞ նա պիտի սպասէ մինչև որ յեղափոխութիւնը՝ անհրաժեշտ ու անխուսափելի՝ պայթէ և իրագործէ արեան ու աւերակների մէջ այն՝ ինչ որ կարող էր իրագործւել խաղաղութեամբ“։

* * *

Գերմանական Ռայխստագի անդամ՝ Աւգուստ Բէբէլ հաղորդում է մեզ ի պատասխան մեր նամակին՝ որ Ռայխստագի սոցիալիստական ֆրակցիան իր վերջին նիստում որոշեց՝ յունւարի վերջերին կամ թէ փետրւարին մէկ հոլետորի միջոցով հրապարակ հանել Ռայխստագի առջև Հայաստանում կատարւած անցքերը։

„Բայց — աւելացնում է Բէբէլ — ագիտացիա սկսել այժմ Գերմանիայի մէջ Հայաստանի համար՝ անհնարին է, որովհետև սոցիալիստ կուսակցութեան ամբողջ ուշադրութիւնը, ամբողջ ուժն ու ժամանակը կենտրոնացած են ընդդէմ այն ճնշողական միջոցների, որ գերմանական կառավարութիւնները ձեռնարկում են առևտրական քաղաքականութեան աշխարհում։ Դրանք բոլորովին կլանում են հանրային հետաքրքրութիւնը. . .“։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԷՆՏՈՒՄ

ՆԻՍՏ 20 ՅՈՒՆՒԱՐԻ 1902

Թողնելով յաջորդ համարին այդ նիստի մանրամասն արձանագրութիւնը՝ առայժմ քաղւածօրէն առաջ կը բերենք մինիստր Դելկասսէի յայտարարութիւնները Ռուանէի նշանաւոր հարցապնդումի առթիւ։

Ռուանէի տաղանդը և նրա պաշտպանած դատի հա-

վակրելիութիւնը շեշտելուց յետոյ՝ Դելկասսէ հետևեալն ասաց. „Ես զարմանում եմ, որ մեր պատուարժան կոլլեգը ուրիշ բան չի տեսնում Ֆրանսիայի վերջին գործողութեան մէջ Արևելքում, բայց եթէ միայն նիւթական շահերի հովանաւորում։ Օտարը, աւելի հեռատես կամ աւելի արդարադատ՝ աւելի լայն ու բարձր նշանակութիւն է տալիս այդ գործողութեանը։

Պատուարժան պ. Ռուանէ ցաւ յայտնեց, որ մենք չ՚օգտուեցինք մեր նաւատորմի ներկայութիւնից Թիւրքական ջրերում՝ Հայաստանի հարցը յարուցանելու համար։ Ես նոր բան չեմ ասի, պնդելով, որ Հայաստանի հարցը, ինչպէս և Մակեդոնիայինը էապէս միջազգային հարց է, որ Թիւրքիան ստանձնել է Բերլինի Կոնգրէսում պարտաւորութիւններ, որոնց վերաբերմամբ Ֆրանսիան չի կարող անտարբեր մնալ. նա յոյս ունի, որ պետութիւնները նպատակայարմար կը դատեն իրենց առանձին ուշադրութիւնը դարձնելու այդ պարտաւորութիւնների վրայ։ Բայց կապել Հայաստանի հարցը Ֆրանս-Թիւրքական ընդհարումի հետ՝ կը նշանակէր իրաւունք տալ Եւրօպային միջամտելու նրա (ընդհարումի) մէջ—մի բան, որից ամէն կերպ պէտք էր խոյս տալ։

Զափազանց ստոյգ է,—ես այդ շեշտեցի դեռ մի քանի շաբաթ առաջ—որ հայերի դրութիւնը այն չէ, ինչ որ Եւրօպան պատկերացնում՝ էր իրեն՝ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը խմբագրելու միջոցին... 1894-95-ի դէպքերը մի նոր դրութիւն են ստեղծել, և կարելի է հարց դնել՝ արդեօք նրանց վերսկսիլը հրապարակ չի՞ հանիլ իրենց բոլոր սաստկութեամբ այն ահաւոր խնդիրները, որ կամենում են հեռացնել խոհեմութեամբ։ Ճակատագրական է թւում, որ եթէ ազգաբնակութիւնները շարունակաբար և անպատիժ կերպով թալանեն ու ենթարկեն եղեռնափորձերի—նրանք իվերջոյ պիտի մտածեն, որ ամէն վիճակ լաւագոյն է, քան այն կեանքը, որ գտնւում է կոտորածի մղձաւանջի տակ։

Ահա թէ ինչու՝ ընդհանուր խաղաղութեան մտահոգութիւնից այլ և մարդասիրութիւնից դրդուած՝ Ֆրանսիան այս վերջին տարիներում ճիգ է թափել—և պ. Ռուանէ լաւ գիտէ այդ—կանգնեցնել չարիքները, որոնք միշտ աւելի և աւելի պիտի զբաղեցնեն քաղաքագէտներին, քանի որ միշտ աւելի և աւելի յուզում են նրանք հանրային գիտակցութիւնը։

Ես արդէն ասացի այստեղ մի քանի շաբաթ սրանից առաջ այն դիպլօմատական ճնշումի մասին, որ մի քանի անգամ մենք գործ ենք դրել Կ. Պոլսում և ուրիշ գործողութիւնների մասին, որոնց ազդեցութիւնը հայերը իրենք խոստովանել և հոչակել են։ Վերջին ընդհարումն իսկ Թիւրքիայի հետ առանց օգտի չի անցել հայերի համար, և հայերը իրենք են պնդում, որ մեր, Ֆրանսիայի ծաւալած էներգիան արգելեց գործադրութիւնը այն սպառնալիքների, որոնք իրենց ասելով՝ վերջին ամառւայ ընթացքում կուտակւած էին նրանց գլխին։ Թոյլ տուէք ինձ յիշատակել այստեղ երկու տող Հայաստանի մի հայի նամակից, բուն տեղում գտնւող մի հայի, որը ամենաականաւորներից մէկն է և որի անունը լռութեամբ կանցնեմ, չուզենալով մատնել նրան զայրոյթի ու վրէժխնդրութիւնների։ Ահա թէ ինչ է ասում այդ հայը, դիմելով Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին.

„Զարդերը տեղի չունեցան, շնորհիւ դեսպանների ազդարարութիւններին և շնորհիւ դիւանագիտական յարաբերութիւնների խզելուն ֆրանսիական կառավարութեան կողմից, որի կորովի ընթացքը ամենազօրեղ տպաւորութիւն գործեց“...

... Պետութիւնների համերաշխ ընթացքը Չինաստանի խնդրում՝ ուր չնայած թիւրիմացութիւնների այնքան պատճառներին ու պատրւակներին և չնայած այնքան անհամաձայնութիւններին, նրանք կարողացան այնուամենայնիւ միանալ—այդ օրինակը թոյլ է տալիս մեզ կարծել, որ այդպիսի մի ճիգ (Տաճկաստանում միջամտելու) վեր չի լինի պետութիւնների բարի կամքից“

ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԻ ՄԷՋ ԿԱԽՒՈՂ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ծընէվի հայ, մակեդօնացի և պուլկար ուսանողները և ուսանողուհիները, եղբայրական սրտառուչ գաղափարով մը միացած, յունուար 4-ին, մասնաւոր սրահի մը մէջ սգահանդէս մը կազմեցին Էտիրնէ կախւող չորս յեղափոխականներուն (երկուքը հայ) յիշատակը պատուելու համար։

Ժամը 9-ին սրահը լեցուն էր. ամէն ազգի ուսանողներէ և շատ մը տեղացիներէ պատկառելի բազմութիւն մը—մօտ երեք հարիւր հոգի—փութացած էր համակրօրէն մասնակցիլ այդ տխուր հանդէսին։

Սգահանդէսը բացուեցաւ Շօպէնի մահերգովը, զոր դաշնակի վրայ ածեց հայ ուսանողուհիներէն մէկը։

Երկու հայ և երկու մակեդօնացի պարագային յարմար ճառեր խօսեցան, որոնք ծանրացան ու շեշտեցին մանաւանդ հայ-մակեդօնական սերտ ու համերաշխ յարաբերութիւններուն վրայ։ „Մենք, ըսաւ հայ ճառախօսը իր բացման ճառին մէջ, միացած էինք մեր անցեալով, մեր գերութիւնով ու մեր թշուառութիւնով, պէտք է որ կուռով միացած մնանք օսմանեան բռնակալութեան դէմ, սուլթաններու բարբարոսութիւնը խորտակելու համար. ասոնք կը պահանջէ մեր ապագան և մեր փրկութիւնը“։

Առաջին ճառէն ետքը հայ երգեցիկ խումբը երգեց „Մայր Արաքսի“ն։

Երկու ատենախօսներ, մէկը պուլկար, միւսը մակեդօնացի, արագ և արիւնոտ գծերով և փաստերով գծեցին Մակեդոնիոյ շարժման պատմականը, մակեդօնացիներու մասնակցութիւնը յունական ապստամբութեան ատեն և նկարագրեցին Թիւրքիոյ քաղաքական և տնտեսական ահռելի վիճակը։ Երկուքն ալ վերջացուցին ճառերնին հայ-մակեդօնական համերաշխ գործունէութեան ներբողը ընելով և սրտագին հրաւէր կարդացին միանգամայն շարունակել կռիւը բռնակալութեան դէմ։

Ճառէն ետքը մակեդօնացի երգեցիկ խումբը երգեց մակեդօնական յեղափոխական երգը։

Վերջին հայ ատենախօսը ամփոփօրէն սահմանագծեց Թիւրքիոյ մէջ հայերուն դրութիւնը և համառօտ կերպով հայկական հարցին ընթացքը ըրաւ. „Եւրօպայի անտարբերութիւնը, ըսաւ, և եւրօպական դիւանագիտութեան մեղսակցութիւնը, չեն կրնար մեզ արգելել կռիւը շարունակելէ“։ Ճառախօսը վերջացուց իր խօսքերը հերոսական նահատակներու յիշատակին յուզած յարգանքը ընծայելով։

Հայ խմբերգը երգեց „Մեր Հայրենիք“ը, որմէ յետոյ ժողովը հետևեալ որոշումը բանաձևեց.

„Ժընէվի հաւասարանին հայ եւ մակեդոնացի ուսանողները, Էտիրնէ կախուած զոհերուն առթիւ, յունուար 4, 1902-ին հաւաքելով, իրենց ջերմ համակրութիւնը կը յայտնեն օսմանեան բռնապետութեան զոհ Հայաստանին եւ Մակեդոնիային եւ կը յորդորեն քաջարի մակեդոնացիները եւ հայերը շարունակել համերաշխ կռիւը հասարակաց թշնամուն դէմ, ժողովը միաժամանակ իր անկեղծ վշտակցութեան արտայայտութիւնը կը ղրկէ զոհերու ծնողներուն“։

Այս որոշումը ընդունեցաւ ջերմ ծափահարութիւնով։

Օսմանեան աղտոտ եւ արիւնարբու բռնակալութեան զոհ երկու դժբախտ ազգերը իրենց ազգակիցներու կախաղանին շուրջը անգամ մըն ալ եղբայրական եւ հաւատարիմ երդումը կ՚ընեն, ազատութեան եւ վերէժխնդրութեան արիւնալի կռիւը շարունակելու համար սուլթաններու անիծեալ եւ նամբտ կառավարութեան դէմ։

Հայ-մակեդոնական այդ սգահանդէսի նկարագրութիւնը լոյս տեսաւ տեղական լրագրերու, ինչպէս եւ *Aurore*-ի ու *Frankfurter Zeitung*-ի մէջ։

ՍԻՕՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԷՍԸ ԵՒ ԺԸՆԷՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Բազէլում գումարուած սիոնիստների կոնգրէսը—ուր ներկայ են եղել դոքտոր Հերցլ, Մաքս Նորդաու և հրէական ցեղի ուրիշ ականաւոր ներկայացուցիչներ — ուղարկել է սուլթան Համիդին յարգանքի և համակրութեան մի հեռագիր՝ հրէաներին ցոյց տուած նրա հովանաւորութեան համար։

Այդ հեռագրի մասին տեղեկանալով՝ Ժընէվի հայ ուսանողութիւնը անմիջապէս ուղղեց սիոնիստական կոնգրէսի նախագահին մի հեռագիր հետևեալ բովանդակութեամբ.

„Ժընէվի հայ ուսանողական ընկերութիւնը՝ յայտնելով իր ջերմ համակրանքը հարստահարուած հրէական ժողովրդին՝ ուղղում է իր խորին զղջանքի արտայայտութիւնը սիոնիստական կոնգրէսին այն համակրական հեռագրի համար, որ նա ուղարկել է Կարմիր սուլթանին“։

Երկու օր յետոյ ժողովեցին բուլգար, ռուս, լեհ, վրացի, հրէա և մակեդոնացի ուսանողները և հետևեալ հեռագիրն ուղարկեցին Միւնոյն կոնգրէսին.

„Բուլգար, ռուս, հրէա, մակեդոնացի, լեհ ու վրացի ուսանողները եւ ուսանողուհիները, համախմբուած դեկտեմբեր 30 Բոնֆանտինիի սրահում՝ որոշեցին յայտնել իրենց խորին արհամարհանքն ու ցաւումը սիոնիստական կոնգրէսին այն ողջոյնների համար, որ նա ուղղել է մեծ դահիճ Աբդիւլ Համիդին“։

Հայ ուսանողների հեռագիրը հրատարակուեց խմբագրական յաւելուածով՝ ֆրանսիական *Aurore* թերթի մէջ, ինչպէս նաև տեղական թերթերում։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Frankfurter Zeitung-ին հեռագրում են Կ. Պոլսից 22 յունուարի, որ Մուշի սանջակում տեղի ունեցաւ ընդհարում մի խումբ հայ ֆէդայիների և թիւրք ժանդարմների միջև, որի միջոցին սպանուեց մէկ ժանդարմական սպայ և վիրաւորուեցին մէկ ենթասպայ ու մէկ զապտիէ։ Ֆէդայիների խումբը անյայտացաւ։

* * *

Միևնոյն լրագրին հեռագրում են Կ. Պոլսից 22 յունուարի — Վանի վիլայէթում արիւնահեղ ընդհարում եղաւ Շէվի և Մելան աշիրէթների միջև և երկու կողմից բազմաթիւ մարդիկ սպանուեցին և վիրաւորուեցին։

Կոչան գաւառի մօտ (Կոսսովոյի վիլայէթում, Մակեդոնիա) տեղի ունեցաւ ընդհարում մէկ բուլգար հայդուկային խմբի և թիւրքաց զօրքերի միջև, որի միջոցին 10 բուլգար սպանուեցին։

* * *

Temps լրագրին հեռագրում են Կ. Պոլսից (Սոֆիայի գծով) 23 յունուարի.—Վանից հասած լուրերը ազդարարում՝ են լուրջ ընդհարումների մասին՝ քրդերի և հայերի միջև. մեծ թիւով սպանուածներ են եղել։ Զօրքերը միջամտել են։

ՆԻՒԹԱՏԻՊԱՐԹԻՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Սիմ. քաղաքից (300 ռուբլի) 795 ֆրանք 75 սանթիմ, ՔՕՆՍՏԱՆԶԱՅԻՑ 240 ֆր., Թ. քաղաքից Թ. Ա.-ից (100 ռուբլի) 265 ֆր., ՎԼԻՍՏՓՈՒԼՄԸՆԻՑ Վ. Մամիկոնի միջոցով (57½ տալէր) 293 ֆր., 30 սանթ., ԵԿԵՂԵՑԻՒ ուսանողներից 1328 ֆր. 70 սանթ. „Դրօշակի“ տասնամեակի առթիւ ԶԻԿԱԳՕՑԻ կոմիտէից (5 դոլար) 25 ֆր. 75 սանթ., ՓԱՐԻԶԻՑ Ս. Բ. 50 ֆր., ՓՕՔՇԱՆԻՑ „Միութեան“ խմբէն 13 ֆր., ՄԻՒՆԽԷՆԻ հայ ուսանողներից 39 ֆր., Ռուստաստանի 8. քաղաքից 15 ֆր., Իբրահիմիա-Շարքիայից (Եգիպտոս) Յով. Կ.-էն 10 ֆր., Իւպիտերից (8 մարկ) 9 ֆր., 85 սանթ., ՈՍԿԱՆԱՊԱՏԻՑ Էլ.-ի միջոցով 800 ֆր., 25 սանթ., տիկին Բ. Ա.-ից 50 ֆր., „Հայրենիքի“ միջոցով ՍՏԱՑԹՐՊ-ՏԱԿՎԻԼԻՑ Ա. ճէվահիրճեանէն (1 դոլար 50 սէնթ) 7 ֆր. 75 ս., ԼԻԷԺԻՑ Ներ.-ից 5 ֆր., ԱՆՎԷՐՍԻՑ Ոմն 50 ֆր., ՊՈՐԲԻՑ Սէմէն 5 ֆր., ՓԻՇԲՈՒՐԳԻ կոմիտէից 33 ֆր., 20 սանթ., ԲՐԱԶԻԼԻԱՑԻՑ Յ. Փ. 50 ֆրանք։ Գումար 4076 ֆրանք 55 սանթիմ։

ՌՈՒՄԱՆԻԱ՝

ՔՕՍՏԱՆԶԱՅԻ „Դեւեան“ խումբը ստացած է՝ „Զորս Գանձ“ խմբի հոկտ. եւ նոյեմբ. ամսավճարները՝ Զարմայր 3 ֆրանք, Բաբկէն 3, Մուշեղ 4. 25, Արտաւազդ, Տիրան, Թուշնիկ, Ապառաժ 2. 75-ական, „Ղեւոնդեան“ խմբի հոկտ. եւ նոյեմբ. ամսավճարները՝ Զաւէն 4 ֆրանք, Հայկակ 3. 75, Վաղարշակ 2. 50, Հրանդ 3. 75, Վռամշապուհ 2. 50, Երճիեաս 2, Թորգոմ 2. 50, Շ. Հ. 1. 50, Համակրողէ մը ստացուած՝ Պալթայ 4 ֆր.։ Գումար 47 ֆրանք 75 սանթիմ։

ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ *Կեդր. Կոմիտէն՝*

„Խաչալեռ“ խմբ. 11 ռուբլի, ԱՄԱՌԱՆՈՑԻ հաշուից սխալմամբ յետ մնացած 16, 1898 թ. ԶՈՐԱՔԱՂՈՐԻՑ Ս. Ճ.-ի ձեռքով 250, Սպարապետի „Դերձակ“ խմբից երեք ամսեան ամսավճարներ 6, խմբի միջոցաւ հանգանակուած 1. 80, Մ. Նուբար 1, Շահումի միջոցաւ Թշնամուց 2, Գիրքի միջոցաւ Հ. Կարօ եւ Կասաբ 1, „Իրանկական“ խմբ. 0. 70, ՆՈՐ քաղաքի „Արծիւ“ խումբ Կայծակ 3. 10, Զարէհ 3, Արիւնոտ Սար 2, Կամաւոր 1, Բլիջան 0. 50, Խուլ Նիկօ 1. 50, Հրաչ 1. 50, Բինկօլ 0. 50, Պիծակ 2, Նէլար 0. 40, Զոխկէօզ 0. 50։ Գումար 305 ռուբլի 50 կոպէկ։

ՅԱՊՈՆ *Կեդր. Կոմիտէն՝*

„Կայծակ“ խմբ. 1900 սեպտ. 1901 օգոստ. մէկ տարեկան 190 դահեկան, նոյն խմբէն նէր 50, Հաւք 1900 մարտ 1901 սեպտ. 19 ամսական 190, Յակօ 1900 դեկտ. 1901 յունվ. փետրվ. 15, „Պատանեաց“ խմբ. 90, Ապառաժ 1900 սեպտ. 1901 սեպտ. մէկ տարեկան 60, հին հաշիւներէ մնացած Պեւոյի ձեռքով Կրպոյէն 20 դահեկան։ Գումար 605 դահեկան։

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)